

11(704)

2024

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

# ԼՍՐԱՐԱՐ

Ճանաչել զիմաստությունն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

Лусарар

ԿՐԹԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՎԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՐԵՏՈ

(Արտավազդ Թումանյան – 130)

Հովհ. Թումանյանի ընտանիքի պատմությունը մի անսպասելի շտեմարան է, որի բացահայտումները ջանասիրաբար ամեն անգամ իրողություն է դարձնում երևանի Հովհաննես Թումանյանի թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը: Թումանյանասեր հյուրերի համար կրկին մի նոր անակնկալ էր պատրաստվել: Լուսավոր ծնունդ էր Թումանյանի թանգարանում:

Ողջունելով ներկաներին՝ Լ. Ղարախանյանը նշեց, որ օրվա հետաքրքիր թեման վերաբերում է ընտանիքի ամենասիրելի զավակի՝ Արտավազդ Թումանյանի կարճատև կյանքին ու գործունեությանը: Նա հորից ժառանգել էր ոչ միայն արտաքին նմանությունները, այլև ստեղծագործելու ձիրքը, մարդկային ազնիվ ու լավագույն հատկանիշները:

Միջոցառմանը ներկա էին բանասիրության բնագավառի հայտնի դեմքեր ու նվիրյալներ, որոնք անտարբեր չեն լուսավոր կյանք ունեցող մարդկանց հանդեպ:

Ուղիղ 130 տարի առաջ՝ 1894 թվականի նոյեմբերի 23-ին, Թումանյանների ընտանիքում ծնվեց 4-րդ զավակը՝ Արտավազդը: Դա մի լուսապայծառ օր էր ընտանիքի համար: Բնությունը շատ շուտ է եղել Արտավազդի նկատմամբ, ճակատագիրն է, սակայն, դաժան եղել: Նա մեծ գեղագետ էր, նկարիչ, գրող, թատրոնի անմրցելի սիրահար, մեծ մարդասեր, որ Արևմտյան Հայաստանի այն մղձավանջային օրերին անգամ պահպանեց իր մեջ խորը մարդասիրությունը:

Թանգարանի տնօրենը ուշադրությունը սևեռեց հատկապես այն հանգամանքին, թե ինչքան նվիրվածություն կար այդ երիտասարդի մեջ, որ Ցեղասպանության դաժան օրերին կարողանում է մտնել Աղթամարի վանքը, արտագրել Գրիգորիս Գեղեցիկի (հավանաբար խոսքը Գրիգորիս Աղթամարցու մասին է) ձեռագիր տաղերը և ուղարկել հորը: Սա խոսում է նրա հոգածու վերաբերմունքի մասին առ ազգային արժեքներ:

Արտավազդը մի լուսավոր կերպար էր, մեծ հայրենասեր, որ ուսանողական տարիների կիսաքաղց կյանքը ճաշակելով հանդերձ՝ իր հոգում ուժ գտավ ու դարձավ կամավորական: Թումանյանի թանգարանում պահպանվում է նրա ամբողջական արխիվը, ու դեռ բացահայտումներ շատ կլինեն:

2013 թվականից թանգարանում սկսվել է Թումանյանի զավակների մատենաշարի հրատարակությունը ու շարունակվում է այսօր: Ընթերցասերների սեղանին են արդեն Արտավազդ Թումանյանի «Նամականին» և նրա ստեղծագործություններն ամփոփող Ա և Բ հատորները:

Օրվա հոբելյարի կյանքի ու գործունեության մանրամասները ներկայացրեց թանգարանի ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպման և հանրահռչակման բաժնի վարիչ Սուսաննա Աղանյանը, որը մեծ ներդրում ունի Արտավազդի կյանքի հանրահռչակման գործում: Արտավազդի քույրը՝ Նվարդը, իր հուշերում գրում է, որ Արտիկը (մտերիմներն այդպես էին կոչում նրան) դեռևս 6-7 տարեկան էր, որ ի հայտ էր եկել նրա նկարչական ձիրքը: Թումանյանի անվանակոչության օրը նա նկարների շարք է նվիրում հորը: Գրական հակումներն էլ էին շատ Արտիկի մոտ: 13 տարեկան էր, որ ռուս հայտնի գրող Միքիլայի «Քաջ մապաստակի պատմությունը» թարգմանել է հայերեն:



Վանի վերջին պարետը

Նորոգյալիս վաղը  
խայրենի երկիր,  
քո գրկում եմ ես...

1894-2024

Այն տպագրվել է և բավականին ճանաչում է բերել երեխային: Տարիներով հիշել են նրան, շատերը քնքշանքով նրան Նապաստակ էին անվանում, և եղել են դեպքեր, որ նրա ծննդյան օրը նապաստակ են նվիրել (ցուցասրահում կար այդ նկարը):

Մանկության տարիներին ինքնաշեն, ձեռագիր գրքեր էր հրատարակում, որի և՛ հեղինակն էր ինքը, և՛ խմբագիրը, և՛ տպագրիչը՝ գրատպության բոլոր կանոններով:

Դրանք բոլորը խնամքով պահպանվում են Թումանյանի թանգարանում: Մի մասը հրատարակվել է, մի մասն էլ սպասում է այդ գեղեցիկ օրվան:

Արտավազդը գրել է բանաստեղծություններ, դրանք սկզբում մանկական ոտանավորներ էին, հետո՝ անպատասխան սիրո գեղեցիկ արտահայտություններ: Սա զարմանալի երևույթ էր, քանի որ Արտավազդը, քույրերն ու մյուս եղբայրները մեծանում էին հանճարեղ մարդու տանը, որի օղջ շնչում էր գեղագիտությամբ, արվեստով, գանազան մտավորականների հետ շփումներով (Լևոն Շանթ, Դերենիկ Դեմիրճյան, Նիկոլ Աղբալյան, Ղազարոս Աղայան...):

Ընդհանրապես հոր խորհուրդները, կենսափիլիսոփայական հայացքները մեծ դեր են խաղացել Արտիկի հոգևոր զարգացման գործում: Արտիկին հիմնականում հարած պատասխան նամակում Թումանյանը գրում է՝ ինչի՞ է պետք տգետ նկարիչը: Իրոք, շատ կարևոր էր լայն աշխարհընկալումը, որին այնպես սիրահոժար ձգտում էր որդին:

Պատանի հասակում Արտավազդն ար-

տորյակ էլ կազմել:

Երիտասարդ գրողի շատ ու շատ մտքեր ամփոփված են նրա հիշատակարանում: Հայրն էր խորհուրդ տվել պահել հիշատակարաններ և գրի առնել հետաքրքիր հանդիպումները, կարևոր անցքերն ու իրադարձությունները: Մի առիթով հայրը, բարձր գնահատելով Արտավազդի հիշատակարանը, մյուս զավակներին ասել էր, թե նրանց



հիշատակարանները ավելի շուտ մոռացարաններ են հիշեցնում:

Այսօր էլ Թումանյանի թանգարանում պահվում է Արտիկի հիշատակարանը, որը, սակայն, անընթեռնելի է, որի պատճառով դժվարություններ են ստեղծվում: Դեռևս Վանից գրած նամակներից մեկը հայրը ետ է



ուղարկում որդուն՝ ասելով՝ գրիր, տեսնեն՝ ինչ ես գրել:

Արտավազդի կերպարն ամբողջանում է հենց իր գրած նամակներով, որի որոշ էջեր

վերծանել է կրտսեր քույրը՝ Թամարը: Նամակներից շատերը դեռ խորը ուսումնասիրության կարիք ունեն: Նրա նամակներից տեղեկանում ենք, որ սիրած հեղինակը Օսկար Ուայլդն էր, որին այնքան ձգտում էր նմանվել ինքը ու պաշտում էր նրա գրականությունը: Անգամ սանրվածքն էր փոխել ու դարձրել Ուայլդի նման: Արտավազդը, որի գերագույն նպատակը նկարիչ դառնալն էր եղել, և ծնողներն էլ ֆինանսական միջոցներ չեն ունեցել, երբեմն մտածում էր դիմել Աղայան-Պապեին՝ օգնել իրեն՝ իրականացնելու իր նվիրական երազանքը: Ի դեպ, նրա երազանքն իրականություն է դառնում Մոսկվայում, որտեղ նրան ամենաջերմ վերաբերմունքի է արժանացնում Մարտիրոս Սարյանը և իր խորհուրդներով օգնում երիտասարդին: Հետագայում Արտավազդը մի հողված է գրում, որտեղ բարձր է գնահատում Սարյանի գույները՝ բոլորից տարբերվող ու մինչ այդ բացակայող, ու նրան համարում ոչ թե արևելյան գույների, այլ Արևելքի նկարիչ:


Արտավազդի նախասիրություններից էր նաև դրամատուրգիան: 1915 թվականին, երբ Գորոդեցկու հետ ծանոթանում է ու մեկնում Վան, նրա հետ գրույցի ժամանակ Արտավազդն իրեն համարում էր դրամատուրգ. գուցե դրանով նա հոր երազանքն էր փորձում իրականություն դարձնել: Այնքան կարճ է ապրել Արտավազդը, որ դժվար է տարանջատել նրա կյանքի տարբեր փուլերը՝ նկարիչ, գրող, դրամատուրգ և այլն: Ժամանակակիցները նշում էին, որ Թումանյանի տասը զավակներից հենց Արտավազդն էր շատ նման հորը՝ իր խորունկ ու գեղեցիկ աչքերով, բարի ժպտով...:

Սերգեյ Գորոդեցկու հետ միասին, որին սովորեցնում էր հայերեն գրել, Արտավազդը հավաքագրում էր արդեն անօթևան որբերին ու նրանց համար կացարանների, ժամանակավոր հոսպիտալների, սննդային կայանների հարցեր լուծում: Իր զինվորական ծառայությունն ավարտելուց հետո անգամ տուն չի վերադառնում, այլ կամավորագրվում է ու փորձում արևմտահայության հարցերը լուծել: Նա վերջինն է, որ լքում է Վանը, որի փրկության համար շատ բան է արել: 1918 թվականին վերջնապահ խմբի կազմում զոհվում է Արտավազդը: Ամերիկյան անսագրերից մեկի շապիկին այդ տարիներին հայտնվում է Արտավազդի լուսանկարը՝ հայ որբերի հետ միասին, որ տրամադրել էին Վանում գտնվող ամերիկյան միսիոներները: Անգամ այդ սև մղձավանջի մեջ նա իր հոգու լույսն էր պարզում մարդկանց՝ ընտանիքից միշտ ներկեր, նկարչության պարագաներ պահանջելով և թիֆլիս մեկնողների հետ իր նկարները տուն ուղարկելով:

Երկրորդ բանախոս արվեստաբան, բ.գ.թ. Ռուզաննա Սարյանը (Նա Մարտիրոս Սարյանի թոռն է) ներկայացրեց Մարտիրոս Սարյան-Արտավազդ Թումանյան աղբյուրները: 24 տարվա կյանքի ընթացքում երիտասարդը կարողացավ այնպիսի հետք թողնել, որ կարող է նույնիսկ մի քանի անհատի կենսագրական կազմել: Մարտիրոս Սարյանի մոսկովյան արվեստանոցի մասին առաջին անգամ խոսել է Արտավազդ Թումանյանը, երբ այցելելով այդ արվեստանոց՝ գրել է. «Ցուրտ Մոսկվայում ծնե՞ր ժամանակ Սարյանը նկարում է Պլյտ շոգը... Նա մեծ ապագա ունի:

ԱՐՅԱՆԻ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԸ

ՆՇՎԵՑ ԱՎԵՏԱՐԱՆՈՅԻ ԴՊՐՈՑԻ 150 - ԱՄՅԱԿԸ



Մեծ Գայանի Արցախի նահանգի հնամայն բնակավայրերից է Ավետարանոցը: Եղել է համայնի մեկիջություններից Կարանդաշի մեկիջանիստը՝ Մելիք Շահնազարյանների նստավայրը: Այն դարեր շարունակ եղել է անառիկ ամրոց ու դիմակայել բազում ասպատակողների: Արցախյան 2020թ. 44-օրյա պատերազմի օրերին Ավետարանոցը նույնպես մնաց թշնամու տիրապետության տակ. առաջին անգամ ամբողջովին հայաթափվեց:

Այս պատմական բնակավայրը հայտնի է նաև իր ճանաչված գավակներով: Գյուղի Կուսանաց անապատում պահպանվել էին Կարանդաշի հզոր տիրակալ Մելիք-Շահնազար Առաջինի (կառավարել է մինչև 1736թ.) և նրա դստեր՝ Գայանեի տապանաքարերը: 18-րդ դարի առաջին կեսին այս հայրենասեր մելիք-նազմական գործիչը նույնիսկ հարկ չէր վճարում Նադիր շահին: Դուստրը՝ Գայանեն, աչքի է ընկել հերոսությամբ: Լեոյի «Մելիքի աղջիկը» վեպում նկարագրված է այդ մասին: Ռուսական բանակի նշավոր զորավար Վալերիան Մաղաթովը (Ռուստոմ Գրիգորի Մաղաթյան, մայիսի 18 (29), 1782, Ավետարանոց-սեպտեմբերի 4 (16), 1829, Շուսեն, Բուլղարիա) նույնպես Ավետարանոցից է:

Կրթության ու գիտության բնագավառում ևս Ավետարանոցից հայտնի շատ մարդիկ կան: 19-րդ դարում Ավետարանոցի որոշ երեխաներ կրթություն ստացել են Ամարասի վանքի եկեղեցական դպրոցում, իսկ 1869թ. գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից բացվել է 15 աշակերտ ունեցող դպրոց: 1874թ. գյուղում բացվել է նախակրթարան՝ 20 աշակերտով՝ ունենալով 1 ուսուցիչ՝ քահանա Ալեքսանդր Ամիրյանցը: Ավետարանոցի բնակիչների խնդրագրով, Գայանե կաթողիկոսի աջակցությամբ 1874թ. բացվում է միջառայա ծխական դպրոց՝ 1 ուսուցչով և 25 աշակերտով: Այնուհետև սկսվում է այս կրթօջախի կարևոր գործունեությունը: Իհարկե, 19-րդ դարավերջին որոշ ժամանակով փակվում են հայկական դպրոցները ռուս ցարի հրամանով, սակայն հետագայում Արցախում կրթությունը շարունակվում է:

Խորհրդային տարիներին Արցախում առավել ճանաչված դպրոցներից էր Ավետարանոցի կրթօջախը: Այստեղ 1954-ին աշխատանքի է անցնում հարևան Ջրաղացներ գյուղի բնակիչ, մասնագիտությամբ ֆիզիկոս Իվան Աթայանը: 1965 թվականին նշանակվում է տնօրեն և դպրոցը ղեկավարում մինչև վախճանվելը՝ 1998թ հուլիսի 3-ը: Նրա տնօրինության ժամանակ առավել է ճանաչված է դառնում Ավետարանոցի դպրոցը:

1992թ. մարտ-ապրիլ ամիսներին Բերդաձորի ջոկատներից մեկի կազմում Ավետարանոցում էի: Նախապատրաստվում էր Շուշիի ազատագրումը: Մեր գործընդեր տեղակայված էր Ավետարանոցի մետաքսի կոմբինատի շենքում, որը նախկինում ծա-

ռայել էր դպրոցին, ավելի վաղ եղել էր մելիքական գրասենյակ: Ընթացքում ծանոթացա գյուղի մարտական ջոկատի տղաների հետ: Ազատամարտիկ և դպրոցի ուսուցիչ Գրայր Մնացականյանի հետ այցելեցի դպրոց: Չնայած ընթացող պատերազմին՝ դպրոցը գործում էր: Մոտ 30 ուսուցիչ նվիրումով աշխատում էր կրթօջախում՝ Ի. Աթայանի ղեկավարությամբ: Սիրով է ընդունում ինձ Ի. Աթայանը: Մտահոգ էր, բայց հավատով լեցուն՝ ազատագրելու ենք Շուշին, ազատագրվելու է Արցախը և միավորվելու մայր հայրենիքին: Դպրոցը 1976-ից գործում էր արդեն տիպային երկհարկանի շենքում, որտեղ Ի. Աթայանը հիմնել էր ֆիզիկայի ուսումնամեթոդական կարիքներ ու լաբորատորիա, ստեղծել նյութատեխնիկական հարուստ բազա՝ ուսուցման համար անհրաժեշտ սարքերով, որոնք նախագծվում և պատրաստվում էին նաև աշակերտների ջանքերով: Ի. Աթայանը իր ղեկավարած կրթօջախի մասին է պատմում և ինձ նվիրում իր հեղինակած «Լուսի տաճարը» գրքույկը՝ նվիրված հայրենի երկրին և հատկապես՝ կրթօջախին: Տեղեկացնում է, որ տարվա սկզբին նախատեսել էր իրականացնել դպրոցի հիմնադրման 120-ամյակին նվիրված միջոցառումներ, սակայն պատերազմի պատճառով տեղի չէին ունեցել: Իր գրասենյակի դարակում դեռ պահվում էին հրավիրատուները: Նույն տարվա սկզբին դպրոցի շենքում էին տեղակայվել խորհրդային բանակի զինվորները: Տանկը քանդել էր նաև դպրոցի բակ մտնող մուտքի մի հենասյունը: Պատերազմի ողջ ընթացքում Ավետարանոցի դպրոցը գործեց:

Երկրորդ անգամ Ի. Աթայանին հանդիպեցի 1994թ. դեկտեմբերին: Դարձյալ այցելեցի դպրոց: Նշում էին Գովի. Թումանյանի ծննդյան 125-ամյակը: Դպրոցականները բեմականացրին «Անուշ» պոեմը: Գաղթել էինք, ազատագրել Արցախը, բայց՝ մեծ գոհողությունների գնով: Ավետարանոցի հանգստարանում պատերազմի պատճառով ավելի քան 20 շիրմաքանդ էր ավելացել: Ռազմի տարբեր ծանփաներում մարտիրոսվել էին հերոս գյուղի հերոս տղերքը, որոնց մասին հետագայում «Արծիվներն ամպերի մեջ» գիրքը գրեցի: Զինակազմում իր ղեկավարած կրթօջախի սաներն էին նաև հատակ-տղաները, և դպրոցից հատուկ անկյուն էր նվիրված Անմահ հերոսներին:

Առայժմ հայաթափ Արցախի հերոսական Ավետարանոց գյուղի կրթօջախի հիմնադրման 150-ամյակին նվիրված ցերեկույթ կայացավ նոյեմբերի 12-ին ԳԱԱ դահլիճում: Տեղի ունեցավ նաև «Ավետարանոցի դպրոց. 150» հանրագիտարանային գրքի շնորհանդեսը: Գրքի հրատարակությունը հովանավորել են դպրոցի շրջանավարտներ Ժիրայր Աթայանը, Արտիկ Մնացականյանը և Կրեթ Թադեոսյանը: Առաջաբանը գրել է Կամո Աթայանը: Զանառտ տեղեկություններ կան նաև գյուղից նախատակված 45 ազատամարտիկների մասին: Ներկա էին հիմնականում արցախցիներ՝ կրթության ու մշակույթի բնագավառների ներկայացուցիչներ, Աժ պատգամավորներ, Ավետարանոցի բնակիչներ, հյուրեր: Բացման խոսքով հանդես եկավ Իվան Աթայանի որդին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, այդ դպրոցի շրջանավարտ և ուսուցիչ Կամո Աթայանը, որը 2005-2007թթ. ղեկավարում էր Արցախի կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Ներկայացրեց դպրոցի անցած ուղին, կարևորեց այստեղ աշխատած մանկավարժների դերը, որոնք լավ կրթություն են տվել իրենց սաներին: Առաջ քաշեց մի քանի հարց՝ ինչու՞ է կարևորել նշել Ավետարանոցի դպրոցի 150-ամյակը, կա՞ր Արցախի կրթության համակարգի պարփակ տարբերություն ու հետազոտություն և այլն: Այսօր, երբ վտանգված է նաև Արցախի մշակույթը, պատմական ժա-

ռանգությունը, մենք պետք է մշտապես տեր մնանք մեր արժեքներին: Այս առումով էլ են կարևոր նման միջոցառումները: «Արցախի պատմությունը, մշակույթը մենավոր ընկալված են, որին ինչով պատահի խփում են՝ փորձելով այն սեփականացնել: Այսօր և մի քանի տարի շարունակ հայաթափված Արցախում տեղի է ունենում նաև մշակութային ցեղասպանություն: Արցախի հետ տեղի ունեցածը մեծագույն ողբերգություն էր: Մի քանի հազարամյա հայաբնակ, հայաշունչ երկրամասը, որի վերջին կարգավիճակն ինքնահռչակ հանրապետություն էր, առաջին անգամ ամբողջությամբ հայաթափված է...», -իր խոսքում նշեց Կ. Աթայանը: Խոսելով Ավետարանոցի դպրոցի մասին՝ նշեց, որ այնտեղ աշխատում էին նվիրյալ ու ստեղծագործող ուսուցիչներ, գործում էր մանկավարժական հայտնի դպրոց-ընտանիք-հասարակություն եռանկյունին: Իսկ Արցախի հարցի փակումը, Կ. Աթայանի խոսքով, կապված է ողջ հայ ազգից՝ անկախ որտեղ են բնակվում:

Ելույթներով հանդես եկան նաև դպրոցի մանկավարժներ, Ավետարանոցի բնակիչներ, այլուք: ԱՅ ԿԳՄՍ նախկին նախարար, այժմ Գովհանես Թումանյանի թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը, խոսելով այդ կրթօջախի մասին, նշեց, որ այնտեղ պատերն անգամ հրամայում էին: «Պատերազմից հետո, երբ մենք 2000 քառակուսի մետր էինք, 5 «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ ենք տարել բաց վերքով, դպրոց ենք բացել, 3 «Թունո» տուփեր ենք տարել, այսինքն՝ ապագան կառուցել ենք կրթության տեսլականով: Ու աննկարագրելի ծանր է այն, ինչ հիմա ես ապրում եմ», -ասաց Լ. Ղարախանյանը: Փոխտնօրենի գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ Ալեքսանդր Մանասյանը, որը 1957թ. արժաթե մեդալով ավարտել է Ավետարանոցի դպրոցը, ելույթի ընթացքում նաև կարևոր էր կատարեց, կարևորեց, որ արցախցիները միավորված մնան, պահպանեն ավանդույթները, առավել կարևորեց Արցախի բարբառը: Դպրոցի շրջանավարտ, լրագրող Կարդուհի Բաղդասարյանն իր ելույթում նկարագրեց դպրոցական տարիները, սիրելի ուսուցիչներին, հատկապես՝ Ի. Աթայանին, որն իրեն խորհուրդ է տվել դառնալ բնագետ, սակայն մայրենի լեզուն է կարևորել ինքը: Բոլոր ելույթ ունեցողները բարձր գնահատեցին հատկապես Իվան Աթայանի վաստակն այդ կրթօջախի կյանքում, որն Արցախում ԽՍՀՄ վաստակավոր ուսուցիչ կոչման արժացած միակ մանկավարժն էր: Նա եղել է նաև Արցախյան շարժման առաջամարտիկներից, «Կռունկ» կազմակերպության անդամ: Նրա մահից հետո Ավետարանոցի դպրոցը կոչվել է Իվան Աթայանի անունով:

Միջոցառման կազմակերպիչներից իրավաբան, նույն դպրոցի շրջանավարտ, ոստիկանության փոխգնդապետ, Արցախյան ազատամարտի ակտիվ մասնակից Արտյուշա Մաղաթյանն իր ելույթում հավատ հայտնեց, որ մի օր կլինի վերադարձ հայրենի գյուղ: Նույն միտքը հայտնեցին գրեթե բոլոր ելույթ ունեցողները, որոնք արդեն 4 տարի է՝ հեռու են տնից ու կարոտով են հիշում: Վերջում ցուցադրվեց ֆիլմ Ավետարանոցի և տեղի կրթօջախի մասին:

Ընթացքում հանդիպեցի գյուղի ազատամարտիկների ջոկատի հրամանատար Գամելտ Ստեփանյանին, ազատամարտիկ, վաշտի հրամանատար Միքայել Դանիելյանին, ոստիկանության փոխգնդապետ Գրայր Բաղդասարյանին, նախատակ տղաների հարազատների, որոնց հետ ծանոթացել էի 1992 և 1994 թվականներին: Ցավն ու կարոտն է բոլորին տանջում, բայց կա նաև տունդարձի հավատ:

Ջոհրաբ ԸՆԹԵՍԱՐ

ԱՐՅԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՏ ԽՈՍՈՒՆ ՎԿԱ Է, ՊԱՅՔԱՐԻ ՈՒԺԵՂ ԳՈՐԾԻՔ

Արցախի Ավետարանոց գյուղի դպրոցի 150-ամյակի կապակցությամբ «Առավոտ» թերթին տված հարցազրույցում Արցախի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախկին նախարար, Գովհ.



Թումանյանի թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանն ասել է. «Երբ 2005 թվականին տոնեցինք գրերի գյուտի 1600-ամյակը, դա բիրելիական երանության նման մի բան էր: Այդ օրերին ես ավելի խորն են զգացել իմ արմատները Գայանե արեւելից կողմանց: Եվ Գայանե արեւելից կողմանց մշակույթը մեկ անգամ չէ ավերի ու ավարի ենթարկվել: Իսկ այսօրվա խորհուրդն ինձ համար ինքս դեպի ինձ գնալն է, ինքս ինձ ճանաչելն է, ինքս ինձ նորից մոտենալն է, ինձ գրկելն է: Մի հետաքրքիր բան կա Վաչագան թագավորից մեզ փոխանցված, որ կրթության նկատմամբ, չեն ամաչում այդ բառից, կար դավանանքի, պաշտամունքի հասնող մոտեցում Արցախում: Վաչագան թագավորը կառուցել է 365 եկեղեցի, որը ենթադրում էր այդքան գրչատուն էր դպրատուն: Եվ այդ նկարագրի մատյաններին, տարբեր ժամանակներում արվեստավոր գրական խոսքի հետ մեզ է փոխանցել կրթության նկատմամբ պաշտամունքային մոտեցումը:

Ավետարանոցը մեր Արցախի կրթական համակարգում դիմացկուն, անհողողող, նախանձախնդիր, կրթության եւ կրթության որակի համար մարտնչող կրթողներից էր, որն իր ունեւորն ապրել է խորհրդային տարիներին, երբ դպրոցի տնօրենն էր Իվան Աթայանը: Ավետարանոցի դպրոցը, որը նախկինում գործել է մելիքական գրասենյակի տարածքում, հավատարիմ էր նախնայաց հայաբնակաստ եւ մշակութանապատ վարքին: Ես շատ կրթական համակարգեր են առիթ ունեցել ուսումնասիրելու, բայց Ավետարանոցի դպրոցի համակարգը մանկավարժական կոնցեպտի եւ մնացյալի առումով հանրակրթության մի այնպիսի մշածող էր սահմանել, որին աշխարհի առաջադեմ համարվող շատ դպրոցներ կնախանձեին: Սա չափազանցություն չէ: Եվ շատ վիրավորական է, որ Արեւելից կողմանց այս 150 տարեկան դպրոցը, որի տարիքին էլ չի մեր հարևանը, շան ոտքի կխխան է դարձել այսօր: Շատ ծայր է մեզ համար, շատ ծանրացող խոսքով են ես այստեղ, որովհետեւ այդ երկրում COP29 է իրականացվում, որը 21-րդ դարի ամենամասշտաբային կեղծիքն է: Բայց միեւնույն է, դա չպետք է խանգարի, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը կառուցի իր տեսլականը, Արցախի վերադարձի իր տեսլականը: Ես, օրինակ, այսօր փորձելու են կրթության իմ խրամատը: Դա նշանակում է՝ Արցախի կրթության համակարգի տարբերության ամբողջականացում, որը շատ խոսուն վկա է, պայքարի հանելու շատ ուժեղ գործիք է եւ իսկապես պետք է տեր կանգնեմք մեր կրթական շատ հարուստ ժառանգությանը եւ խնամքով փոխանցեմք սերունդներին:

2020թ. պատերազմից հետո, երբ մենք 2000 քառակուսի մետր էինք, 5 «Արմաթ», ինժեներական լաբորատորիա, 3 Թունո տուփեր ենք տեղադրել՝ բաց վերքով, դպրոց ենք բացել, այսինքն՝ ապագան կառուցել ենք կրթության տեսլականով: Ու աննկարագրելի ծանր է այն, ինչ հիմա ես ապրում եմ: Մեր կրթական համակարգի վիճակագրության մեջ տոկոսային առումով, եթե հանենք դասավանդող եւ աշակերտական կազմի պատկերը Արեւելից կողմում, ապա փաստ է, որ այսօրվա քոչվորներն ընդհանրապես չկային այն ժամանակ: Այդ ցուցանիշներով կարելի է դուրս գալ մարտի, բայց ունենք այն, ինչ ունենք»:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՊԱՆ

ՊԱՍՏՊԱՏՐԱՍՏԱՆ, ԹԵ՛ ԺԱՄԱՆՅՈՒ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ



Արամ ՓԱԽՉԱԼՅԱՆ

Երևանում (և ոչ միայն Երևանում) մոլախոտի մամ տարածվել են դասապատրաստման կենտրոնները: Ես չեմ ուզում դրանց բոլորին մեկ գույնով ներկել: Դրանք տարբեր են: Սակայն դրանց մեծ մասը ոչ թե օգնում է կրթությանը, այլ՝ վնասում: Խոսքեր այն մասին, թե ինչ հետևանքներ են ունենում այդ կենտրոնները երեխաների, նրանց կրթության վրա, և ինչ պետք է անենք, որ մի բան փոխվի:

Ի՞նչ է դասապատրաստման կենտրոնը: Դրանք սովորաբար առաջանում են հենց դպրոցների հարևանությամբ: Երեխաները, չսպասելով անգամ ծնողների, դասերից հետո ուղիղ գնում են այնտեղ և մնում այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է, որ ծնողներն աշխատանքն ավարտեն և գան իրենց հետևից: Ենթադրվում է, որ երեխան այդ ընթացքում անում է իր տնայինները, և երբ գալիս է տուն, արդեն պատրաստ է, ուղղակի կարող է խաղալ, զբաղվել և ժամանակ անցկացնել իր համար հաճելի զբաղմունքներով: Հիմա ո՞րն է խնդիրը:

Սկսենք լավ բաներից: Ինչո՞վ են այդ կառույցներն օգնում: Առաջին. սովորաբար այնտեղ կերակրում են երեխաներին: Եթե ծնողները բավարար ապահովված չեն և չունեն հնարավորություն վարորդին ուղարկել, իսկ իրենք աշխատանքի են և չեն կարող գնալ դպրոց, որպեսզի երեխային վերցնեն, ապա դա երկի լավ տարբերակ է, որ երեխան լինի անվտանգ միջավայրում, վերահսկված, սոված չի լինի և իրենով կզբաղվեն վստահելի մարդիկ, որոնք նրան հաստատ վնաս չեն տա:

Երկրորդ: Այդ կենտրոնը պետք է որ օգնի երեխային կատարել տնային աշխատանքը, վերահսկի, որ նա տնայիններն ամբողջովին անի: Եվ իսկապես, եթե ամեն ինչ ճիշտ է արված, երեխան գալիս է տուն, և արդեն ունի հնարավորություն կամ հավելյալ դասեր սովորել, որոնք պարտադիր չեն, կամ այլ հետաքրքիր նյութեր, կամ ուղղակի հանգստանալ և շփվել ընտանիքի հետ: Բայց այդ դեպքում ինչո՞ւ ենք մենք դրա մասին խոսում այդպիսի մտահոգությամբ, ինչո՞ւ ենք համարում, որ այդտեղ մեծ խնդիր կա:

Բացատրենք: Փորձից ելնելով՝ այդպիսի կենտրոնները, իրենց բնույթով լինելով առևտրային, ուզում են գոհացնել ծնողին: Եվ ի՞նչն է գոհացնում ծնողին. այն, որ երեխան բոլոր տնայինները պատրաստել է: Գոհացնում է նաև ուսուցիչներին, որովհետև ուսուցիչը գիտի, որ եթե դասին երեխան չլսեց, անուշադիր է, կենտրոնացած չէ, ինչ-որ բան չսովորեց, ոչինչ, կգնա այդ

կենտրոն, նրա հետ կաշխատեն, կբացատրեն, ամեն ինչ կսովորեցնեն: Բայց շատ հաճախ և՛ ծնողները, և՛ ուսուցիչները ենթարկվում են խաբեության: Այդ կենտրոնի աշխատակիցները շատ հաճախ նախընտրում են ուղղակի հուշել երեխային: Եթե երեխայի մոտ մի բան չի ստացվում, ի՞նչ պարտադիր է նրան բացատրել, եթե կարելի է ասել՝ այսպես արա՛, կամ ուղղակի նրա փոխարեն գրել, իսկ երեխան թող խաղա: Այդպես ավելի հեշտ է, այդպես կրթական խնդիր դու չես լուծում: Իսկ կրթական խնդիր լուծելը ամենադժվար բանն է: Եվ քանի որ չկա բացարձակ որևէ վերահսկողություն ո՛չ ծնողների, ո՛չ էլ ինչ-որ լիազոր մարմինների կողմից, այդ կենտրոնները կարող են անել այն, ինչ իրենք են համարում ճիշտ: Իրենք չունեն գործունեության հստակ չափորոշիչներ, որևէ կրթական վերջնարդյունքներ: Դրանք իրենց բնույթով ժամանցային վայրեր են: Այնտեղ կրթություն իրագործելու նպատակ դրված չէ: Հակառակը, երեխան պետք է հնարավորինս արագ հաղթահարի տնայինների հարցը, մի կողմ դնի և վազի խաղալու: Այնտեղ երաժշտություն է, երգում են, պարում են, զբաղվում են: Եվ ստացվում է, որ կրթությունը չի կարևորվում, կարևորվում են այլ բաներ: Իսկ դա բերում է նրան, որ էլ ավելի ու ավելի է նվազում երեխայի հետաքրքրվածությունը մի բան սովորելու նկատմամբ: Դա թիվ մեկ խնդիրն է:

Թիվ երկու խնդիրն այն է, որ շփումը երեխայի և ծնողի միջև կրթության շուրջ խզվում է: Տնայինը պետք է ոչ միայն նրա համար, որ երեխան վարժվի ուղղակի ինչ-որ բան անել, այլ որ երեխան ունենա նյութ, բովանդակություն, ունենա համատեղ գործունեություն ծնողների հետ, որը վերաբերում է իր՝ երեխայի կրթությանը: Եթե մնան բան չկա, եթե ծնողը գիտի հաստատ, որ ինչ որ վերաբերում է կրթությանը, այդ կենտրոնում լուծել են, նա չի խոսում երեխայի հետ կրթության շուրջ: Լավագույն դեպքում խոսում է գնահատականների շուրջ, և ստացվում է այնպես, որ երեխան ընդհանրապես չի ներգրավվում ծնողին կրթության մեջ, ծնողներն իրենք էլ չեն ներգրավվում: Նաև երեխային չի ձեռք տալիս ներգրավել: Երեխային պետք է, որ ծնողներն այդ հարցերը չտան, որովհետև երեխան այդ նշանը՝ ծիտիկը, որ դրել է, նշանակում է՝ կատարել եմ, պետք է ծնողներին համոզի, որ ամեն ինչ արված է. տնայիններն արված են, և նա կարող է խաղալ, զբաղվել այլ բաներով, այլ ոչ թե կրթության: Եվ եթե տանը չի լինում կրթություն, երեխայի մոտ չի առաջանում զգացողություն, որ նա տանն ունի տարածք, որտեղ նա սովորում է: Եվ դա շատ վատ է, որովհետև մենք պետք է սովորենք սովորել տանը: Որովհետև մենք սովորելու ենք մեր ամբողջ կյանքում նաև տանը: Տանը լինելու է այն տարածքը, որտեղ այդ սենյակում մի սեղան է լինելու, որտեղ մենք աշխատելու ենք և աշխատելու ենք նաև սովորելու համար: Իսկ եթե այդ մշակույթը փոքրուց չկա, հետո շատ դժվար է այն ձևավորել: Ի՞նչ պետք է անել դրա փոխարեն:

Իհարկե, շատ կարևոր է, որ երեխան, բացի ուսումնական ընթացքից, ունենա նաև ինչ-որ հետաքրքրություններ, ինչ-որ զբաղմունքներ դպրոցից դուրս: Դրա համար կան շատ լավ հաստատություններ. կա Թունոն, կան «Արմատ» լաբորատորիաները, որոնք դպրոցներում են սովորաբար տեղակայված, բայց իրենց բնույթով արտադասարանական զբաղմունք են: Հիմա խմբակներ են բացվում շատ դպրոցներում պետական ֆինանսավորմամբ, և երեխաները կարող են հաճախել: Մարզերում կան տարածված տարատեսակ երիտասարդական կամ մանկական կառույցներ, օրինակ, «Մարզերի՝ երեխաները՝ մարզերում»՝ Մեմ-ը, որտեղ բազմաթիվ երեխաներ են ներգրավված և զբաղվում են շատ կարևոր, հետաքրքիր գործունեությամբ: Կա «Մուկ»-ը, որը Արցախից եկավ Հայաստան և հիմա տարածվում է, ունենում է իր մասնաճյուղերը: Կան հրթիռաշինության լաբորատորիաներ, երգի, պարի դպրոցներ, կան տարբեր կառույցներ, որոնք ունեն հստակ կրթական նպատակներ, ունեն չափորոշիչներ, ունեն կրթական գործընթաց, որտեղ երեխան գալիս է ոչ թե ժամանակ անցկացնելու համար, այլ իրական կրթական զարգացում է ստանում, որտեղ երեխան շարունակում է սովորել դպրոցից հետո այլ ձևաչափերով, այլ տեսակի զբաղմունքով, ավելի շատ նախագծային, ավելի շատ օգտագործելով իր ուղեղի կամ մարմնի այլ մասերը, որոնք այնքան էլ ակտիվ չեն դպրոցական կրթության ընթացքում: Եվ այդ ամենը հարստացնում է երեխային, հարստացնում է նրա կյանքը: Սովորեցնում է նրան անընդհատ սովորել: Դարձնում է դա բնական: Նա ոչ թե խուսափում է սովորելուց, ոչ թե անում է արագ մի բան, որ մի կերպ անի-պո՞նի և վազի խաղալու, այլ հենց խաղում է սովորելով: Եվ դա ամբողջապես այլ արդյունք է տալիս: Եվ դա իսկապես շատ կարևոր է: Եվ շատ ցավալի է, որ դրա փոխարեն մենք նախընտրում ենք երեխաներին ուղարկել այնտեղ, որտեղ փաստացի կրթություն չկա, որտեղ կա ձևականություն՝ է՛լ ավելի արժեզրկելով կրթությունը:

Ես կոչ եմ անում, որ մտածենք սրա մասին, մտածենք ոչ թե երեխային դպրոց ուղարկելու՝ կրթության մեր պարտքը կատարելու մասին, ոչ թե երեխային առավելության մտածեցնենք մեքենա և ուղարկենք քաղաքի այլ ծայր, ինչ է թե այնտեղ կա մի դպրոց, որը մենք կարծում ենք, որ ավելի լավն է, քան այն մեկը, որը գտնվում է մեր բակում, այլ իրապես խորը ներթափանցենք երեխայի կրթության մեջ և հասկանանք, թե ամեն պահի ինչ է նա սովորում, իրեն ինչ են սովորեցնում, ինչ արժեքներ, ինչ նոր հմտություններ է նա ձեռք բերում, ինչպես է ընթանում նրա զարգացումը: Կարևոր ենք դա, խոսենք դրա մասին երեխայի հետ, այլ ոչ թե արտապատվիրենք մեր երեխայի զարգացումը այլ մարդկանց: Որովհետև մամնապես մենք կարող ենք արտապատվիրել մեր երկրի զարգացումը, մեր սեփական կյանքը այլ մարդկանց և մտածենք, թե ուր կտանի մեզ այդ մտածողությունը:

Ըստ CIVILNET-ի տեսանյութի

ՎԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՐԵՏԸ

1 ... Կովկասը և Արևելքը Սարյանի շնորհիվ մոր գույներ են առել...»: Սա բարձր գնահատական էր ապագա արվեստագետի մասին: «Թող օրինված լինի Արտավազի ծնունդը», - այսպես ավարտեց իր խոսքը Ռուզաննա Սարյանը:

ՀՀ ԳԱՍ ավագ գիտաշխատող, բ.գ.դ., պրոֆեսոր Սուսաննա Հովհաննիսյանը նշեց, որ Արտավազի մասին առանց հուզմունքի հնարավոր չէ խոսել: Ընդհանրապես Թումանյանի բոլոր գավակներն ընդգծված պաշտամունք ունենին հոր հանդեպ, որն էլ արտահայտվում էր նրանց ունեցած նախասիրություններով: Առավել խոսուն էին Արտավազի հայրենասիրական մղումները: Նա 1915-ին զորակոչվեց, բայց հետո էլ կամավորագրվեց: Պետք է Վասպուրական աշխարհում հավաքագրեր բոլոր որբերին և հոգար նրանց կարիքները: Երկուսուկես տարի նա Թիֆլիս չվերադարձավ և խոստանում էր, որ ամեն ինչ կավարտի ու կվերահառնա: Կարոտած հայրը ողջունում է նրա այդ քայլը: Կա՞ ավելի մեծ հայրենասիրություն սրանից բացի:



1918 թվականի հունվարին Արտավազը նշանակվում է Վանի պարետ: Փետրվարի 12-ին արդեն պարզ էր, որ չի փրկվելու Վանը, չի փրկվելու Վասպուրականը, բայց ընտանիքին ուղղված նամակում նա գրում է հորը, որ ամեն ինչ լավ է, շուտով կվերադառնա: Ոգևորված գրում էր, որ գտնվում է Ավարայրի դաշտում, այնտեղ, որտեղ գոհվել են Վարդան Մամիկոնյանը, Ղևոնդ Երեցը... և շատ է ուզում նկարել այդ վայրերը ու աշխատավարձը Անդրանիկի հետ տուն է ուղարկում, որ ներկեր ուղարկեն իրեն: 1918 թվականի փետրվարի 20-ին գրած նամակում արդեն իրականությունը պարզ էր. «Դրությունը շատ վատ է, եթե այս քանի օրը դուրս չգանք Վանից, ուրեմն այլևս չենք տեսնի իրար: Մենք թշնամական օղակի մեջ ենք»: Եթե Արտավազը էլ մյուսների պես գաղթականների թափոնի հետ Պարսկաստանով գնար, կփրկվեր: Երիտասարդ Արտիկը դարձավ Վանի վերջին պարետը:

Նվարդը պատմում էր, որ 1920 թվականին՝ երկու տարի Արտավազի մահից անց, մի գիշեր, հոր ծայնից արթնանում է, տեսնում՝ զինվոր սեղանին դրած երգում էր հոգևոր երգեր: Ու գրում է. «Տրամադրությունը շատ լավ էր, այսինքն՝ շատ վատ էր: Երբ հարցրի, թե այս ուշ ժամին ինչո՞ւ է արթնացել, ասաց. «Երազ եմ տեսել, որ Արտիկս պիտի գա: Նստել եմ, որ դիմավորեմ»»: Արտավազը մեր ժողովրդի եղեմնի զոհերից մեկն է: Թումանյանի ընտանիքը չի շրջանցել մեր ժողովրդի եղբրական պատմության ոչ մի շրջան:

Վերջում Լուսինե Ղարախանյանը տեղեկացրեց, որ հուրախություն բոլորի՝ թանգարանը սկսում է մի նոր նախագիծ. տպագրելու են «Ընտանիքը» գիրքը, որի նպատակն է ազգային օրակարգ բերել Թումանյանի ընտանիքի մանրակերտը, որը, ըստ էության, հայ ժողովրդի ճակատագիրն է:

Հավանաբար 2025-ին կունենանք այդ գիրքը, որում կրկին անդրադարձ կկատարվի Արտավազի կերպարին: Դա կլինի փայլուն մի դաս այն ընտանիքների համար, որոնք օգտագործում են հնարավոր բոլոր միջոցները իրենց որդիներին զինվորական ծառայությունից ազատելու համար:

Սուրյայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՍ ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԱՐՅԱՆԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ

Չոկտեմբերին Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում անցկացված Բոնց-քամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունում Հայաստանը ներկայացնող մարզիկների մեջ էր նաև արցախցի 17-ամյա բոնցքամարտիկ Էրիկ Առստամյանը: Մարզիչ Նարեկ Աբրամյանի սանը 57կգ քաշային կարգում հինգ համառ մեծամարտ ունեցավ, որոնցից չորսում հաղթանակ տարավ: Պարտության մատնեց թուրք մրցակից Չադրի Ֆիդանին, որից հետո բոնցքամարտեց ադրբեջանցի մարզիկ Թադի Նասիրովի հետ, որին նույնպես հաղթեց: Մրցեց Վրաստանի և Սլովակիան ներկայացնող մարզիկների հետ, հաղթեց եւ դուրս եկավ կիսաեզրափակիչ, որտեղ մեծամարտեց Կուբայի Հանրապետությունը ներկայացնող բոնցքամարտիկի հետ, բայց միավորների քչությամբ զիջեց մրցակցին՝ արժանանալով աշխարհի առաջնության բրոնզե մեդալի:

Բոնցքամարտի մարզիչ Նարեկ Աբրամյանն ու բրոնզե մեդալակիր Էրիկ Առստամյանն են մարզական էջի հյուրերը:

Հարց Էրիկին. - Էրիկ, 7 տարեկանից զբաղվում եք բոնցքամարտով Ձեր անձնական մարզիչ Նարեկ Աբրամյանի մոտ, հիմա 17 տարեկան եք, մինչև հիմա պարապում եք, մասնակցում եք տարբեր մրցաշարերի, ուրախությամբ ենք նշում, որ գրեթե միշտ հաջողվում է մեդալներ նվաճել: Իսկ ի՞նչն է ոգեւորում Ձեզ մրցումների ժամանակ:

Պատասխանում է Էրիկը. - Մրցումների ժամանակ ոգեւորում են առաջին հերթին իմ հարազատները: Մեծամարտերից առաջ զանգում ու քաջալերում են, որ պետք է հաղթեմք: Մարզիչն է ոգեւորում գրուցելով, որ ամբողջ Հայաստանն ու Արցախը մեզ են նայում, մենք էլ պիտի նրանց սպասելիքներն արդարացնենք: Նաև խորհուրդներ է տալիս բոնցքամարտի վերաբերյալ, վերլուծում մրցակցիս ու հրահանգավորում իմ մարտավարությունը:

- Թուրք մրցակից ունենալը բարձրացնում է Ձեր մրցակցային ոգին:

- Յուրաքանչյուր մեծամարտ էլ մեծ պատասխանատվություն է, քանի որ դա աշխարհի առաջնություն էր, մրցում էին ուժեղագույն մարզիկները: Բայց թուրք կամ Ադրբեջանը ներկայացնող մրցակիցների հետ մեծամարտելիս ավելի էնդոֆինալ ենք լինում: Այդ դեպքում մենք պարտվելու իրավունք չունենք: Պարտավորված ենք զգում, որ պիտի անպայման հաղթեմք: Օգտվելով հնարավորությունից՝ ուզում են ասել, որ հաղթանակներս նվիրում եմ մեր արցախահայությանը: Թող միշտ ավելի ոգեւորված լինեն ու իմա-

նան, որ մենք կանգուն ենք: Հարց մարզիչին. -Նարեկ, ինչո՞ւ ընտրեցիք բոնցքամարտը որպես մասնագիտություն:

Պատասխանում է Նարեկը. - Դա սկսվեց վաղուց: Մանկապատանեկան հասակում ապրում էինք Ռուսաստանում (2003-2004թթ.): Ընտրեցի այս ուղին, որովհետև պետք էր պաշտպանել ինքդ քեզ, ընտանիքդ: Այն ժամանակ կյանքն այնպես դասավորվեց, որ պետք էր անընդհատ մարզվել, զբաղվել ինչ-որ սպորտով, որպեսզի կարողանաս ապրել, գոյատևել: Ես գրանցվեցի բոնցքամարտի խմբակում: Մեր քաղաքում այդ ժամանակ դա էր զարգացած: Այդտեղից էլ սկսվեցին մեր մարզումները: Առայսօր գտնվում եմ այս ուղեծրում եւ աշխատում եմ: Արդեն դադարել եմ ինքս մարզվել, նկատի ունեմ՝ զնալ մրցումների, սակայն ավելի քան 13 տարի է մարզում եմ երիտասարդներին: Եվ փառք Աստծո, լավ արդյունքներ ենք գրանցում: Շարունակելու ենք աշխատել: Ես կարծում եմ, որ եթե ձեռքներս ծալած չնստեմք եւ առաջ շարժվեմք, կկարողանանք ավելի բարձր արդյունքներ ունենալ բոնցքամարտում:

- Որպես մարզիչ ի՞նչ հիմնական սկզբունքներ եք կիրառում մրցումների ընթացքում:

- Բոնցքամարտն իրենից ներկայացնում է սպորտի մարտական

ծել. այստեղ պետք է դուրս գալ ռինգ եւ կռվել: Եթե բոնցքամարտիկը դուրս է գալիս ռինգ եւ չի կռվում, չի հարվածում, փորձում է խուսափել, որպեսզի ժամանակ ձգի եւ այդպես ցույց տա, թե իբր մեծամարտում է, իհարկե, դրա համար յուրաքանչյուրն ունի իր մակարդակը բոնցքամարտում: Բայց մենք արդեն նայում ենք հակառակորդին. մեկը բարձրասակ է, մյուսը՝ կարճահասակ, մեկը՝ ուժեղ, մյուսը՝ արագ, դուրս ենք որել պլան, մտածում ենք ինչպես կարող ենք նրան ճնշել եւ հաղթել: Ամենակարեւորն է՝ դուրս գալ եւ գիտենալ, որ դուրս ենք գալիս հաղթելու համար: Մասնակցությունը՝ մասնակցությամբ. դա բոլորս գիտենք: Սկզբում մենք բավարարվում էինք նրանով, որ ուղղակի մասնակցում ենք մրցումներին, իսկ այսօր արդեն ջանում ենք ռինգում լինել «բամբլ», որպեսզի արդյունք ստանանք: Երբ մարզիկները փորձում են կիսատ ջանք դնել, ապա արդյունք լինում է, բայց ոչ բավարարող:

- Բացի ֆիզիկական պատրաստվածությունից, ինչպե՞ս եք աշխատում մարզիկների հետ հոգեբանական պատրաստվածության առումով:

- Արցախից հետո, վերաբարձ օրերից հետո բոլորն անցան մեծ սթրեսներով, անցան փորձությունների միջով. սա հասկանալի էրեւույթ է, որովհետև մեծ ճնշում կար կողքից՝ շրջափակում էր դրանից բխող հետեւանքներ: Այս ամենը զգացնել էր տալիս. մարզիկները հոգեբանորեն ընկճվում էին,

նրանք ինչ-որ տեղ հանձնվում էին, ցանկանում էին թողնել սպորտը: Մարզիկների մոտ ամեն ինչ պետք է հանգիստ լինի, որպեսզի նրանք կարողանան հանգիստ պարապել, առաջ շարժվել: Երբ դժվար է ուտելիք գտնել, չկա լույս, ջուր, որպեսզի պարապմունքից հետո լողանան, այստեղ պետք է նրանց մեջ սերմանել այն հոգեբանությունը, թե «ամեն ինչ հնարավոր է», տարբերություն չկա, որ այսօր ծանր է: Երբ նրանք հասկանում են, որ այս անհարմարություններն անցողիկ

են, ապա վաղը նրանց համար ավելի հեշտ է լինում ծանրաբեռնվածությունը տանել: Դրա համար էլ հոգեբանորեն տրամադրում են, որ այս կյանքում անհնարին ոչինչ չկա: Սա՝ առաջին: Զկան անհաղթահարելի մարդիկ, չկա անհաղթահարելի իրավիճակ, այդ պատճառով էլ ես իմ օրինակով եմ ցույց տալիս այս ամենը նրանց: Ես ինչ-որ տեղից եղել եմ սա վերցնում. իմ կյանքն էլ է չեղել դժվար, մենք հաղթահարել ենք դժվարություններն այն բանի հաշվին, որ չենք հանձնվել: Երբ մարզիչը աշակերտին հանձնարարում է 50 անգամ հրում կատարել, նա անում է այդ 50 հրումը, բայց եմթաղենք հոգնել է, արդեն չի կարողանում շարունակել, իսկ մարզիչն ասում է՝ ես 10-20 անգամ անի, նա անցնում է այդ «չկարողանալու» սահմանը, եւ այստեղ գլխում այնպիսի մեխանիզմ է ստեղծվում, որ եթե անգամ դու չես կարող, քո ուղեղը քեզ հրամայում է, որ դու կարող ես: Սկսում ես կատարել այդ առաջադրանքը եւ հասկանում ես, որ անգամ երբ հոգնել ես, արդեն ուժ չունես, քեզ ստիպում են քո մտքերի միջոցով: Վերջիվերջո ամեն ինչ գլխում է, դրա համար պետք է կա-

րողանալ ինքդ քեզ ստիպել աշխատել, չհանձնվել եւ այս ամենը կառավարել պարզ խելքով:

- Կկիսվե՞ք առաջիկայում Ձեր անելիքների մասին:

- Նախ ասեմ, որ մեր շնորհակալությունն ենք հայտնում Հայաստանի բոնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Չովհաննես Չովսեփյանին համագործակցության եւ աջակցության համար: Շուրջ յոթ-ութ տարի առաջ Արցախում մենք չէինք պատկերացնում, որ կարող ենք այսպիսի արդյունք տալ տարիներ հետո: Բայց ահա Էրիկը ՀՀ հնգակի չեմպիոն, Եվրոպայի չեմպիոն է եւ այսօր նա նվաճեց աշխարհի առաջնության բրոնզե մեդալը: Այսբանով մենք չենք ավարտում, իհարկե, ձգտում ենք անընդհատ առաջ գնալ: Օլիմպիական խաղեր կան, ուրիշ շատ բան կա, որ կարող ենք այս կյանքում անել: Հիմա դեռ ուզում ենք հանգստանալ, մտածել ու որոշել, թե ինչ ենք անելու առաջիկայում: Հիմա մեզ համար մի փոքր դժվար է: Մենք միշտ ներկայացրել ենք Արցախը եւ ունեցել ենք մեր տունը: Մենք եկել ենք այստեղ ներկայացրել եւ հետ վերադարձել տուն: Իսկ հիմա երբ տուն չունես, մտածում ես՝ ինչպե՞ս կարող էր այս ամենը տեղի ունենալ, այ, դա սկսում է ճնշել քեզ, դու ուզում ես թռչնի մամն դուրս պրծնել այս վանդակից եւ թռչել ինչ-որ տեղ: Բայց մենք կջանանք, որ մեր հայկական բոնցքամարտը ծաղկի: Մենք՝ որպես արմատներով հայ, պետք է առաջին հերթին հոգանք, որ մեր բոնցքամարտիկները մնան այստեղ՝ մեր երկրում եւ բարձրացնեն մեր հայկական դրոշմը: Հիմա վաղ է խոսել ինչ-որ եզրակացություններից՝ որտեղ ու ինչ, որովհետև պլանները մեծ են, մյուս տարի նա պետք է մասնակցի մեծերի առաջնությանը, այնտեղ լրիվ ուրիշ բոնցքամարտ է: Մենք առաջինը պետք է մասնակցենք Հայաստանի բոնցքամարտի առաջնությանը: Տա՛ Աստված մենք այնտեղ զբաղեցնենք առաջին տեղը, դառնանք չեմպիոն, որից հետո մենք կպլանավորենք մեր ապագան: Իսկ այսօր պետք է հանգստանանք եւ պատրաստվենք հաջորդ առաջնությանը:

Ստյա ԱՎԱԳՅԱՆ

ԱՐՅԱՆԸ ՄԵՆՔ ԵՆՔ, ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է՝ ՎԵՐԱԴԱՐԶ

Մարզական էջի հյուրը կիոկուշինկայ կատե-որ մարտարվեստի մարզիչ, «Վերադարձ» մարզական ակումբի տնօրեն Արմեն ՊԵՏՐՈՍՅԱՆԸ է:

- Արմեն, կիոկուշինկայ կատե-որի ֆեդերացիան Արցախում լայն գործունեություն ծավալած մարզական թերես միակ ֆեդերացիան է, որ կարողացավ Հայաստանում վերսկսել իր աշխատանքը: Ի՞նչ խնդիրների եք առնչվում վերանվաճած «Վերադարձ» ակումբը կանգուն պահելու ընթացքում:

- 2023 թ. սեպտեմբերյան իրադարձություններից հետո մենք, ինչպես մնացած արցախցիները, տեղահանվել ենք, այնուհետև ես սկսել եմ փնտրել իմ աշակերտներին, որպեսզի իմանամ, թե ով որտեղ է գտնվում: Հաջողվել է կապ հաստատել նրանց հետ: Հետո սկսել եմ աշխատանքներ տանել մարզադահլիճ գտնելու համար եւ փորձել հավաքել երեխաներին: Ուզում էի հնարավորության դեպքում անվճար մարզումներ



կազմակերպել, որպեսզի մարզիկները իրենց տարիներով ձեռք բերած ունակությունները չկորցնեն եւ կարատեի միջոցով կարողանան սթրեսներից ձեռքազատվել: Դիմել եմ բազմաթիվ մարդկանց, բայց շատերը չէին էլ փորձում մեզ օգնել: Հակառակը, ինձ ասում էին, թե բնակարանների այսքան թանկ վարձակալության դեպքում ո՞նց կարող են երեխաների մարզումների համար ծնողները գումար հատկացնել: Իսկ ես ուզում էի, որ անպայման անվճար լինեն մարզումները: Վերջապես «Լույս» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն իմ խնդրանքին ընդառաջեց, եւ ես հիմնադրամի հետ տասանյա՝ 2023թ. նոյեմբերից մինչեւ 2024թ. օգոստոս, պայմանագիր կնքեցի: Հետո Նոր Նորքի վարչական շրջանի ղեկավարին հիմնեցի եւ տարբեր դպրոցներ այցելելուց հետո վերջապես թիվ 17 հատուկ դպրոցում, որը նախատեսված է հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող երեխաների համար, մարզադահլիճ տրամադրեցին ինձ՝ շաբաթական երեք անգամ

մարզումներ անցկացնելու համար: Այդպես վերսկսեցի իմ մարզումները: Դեկտեմբեր ամսին արդեն ունեինք 40 աշակերտ: Մեր ընկերների աջակցության շնորհիվ կարողացա 40 աշակերտի անվճար ապահովել մարզահագուստով եւ հանդերձանքով: Աստիճանաբար մարզվողների թիվն ավելացավ: Մենք երկու խմբի բաժանվեցինք՝ կրտսեր եւ ավագ: 2024թ. մարտի 24-ին արդեն կարողացանք տեղահանությունից հետո կազմակերպել Արցախի առաջնություն՝ «Արցախը մենք ենք» խորագրով: Նշեմ, որ մենք միակ մարզական կազմակերպությունն ենք, որ կարողացել ենք Արցախի առաջնություն անցկացնել Արցախից դուրս: Առաջնությանը մասնակցել են 56 մարզիկներ: Այդ միջոցառման արդյունքներով կազմավորել ենք հավաքական թիմ, որի կազմով մասնակցել ենք Հայաստանի գավաթի խաղարկությանը, որտեղ տվել ենք վեց չեմպիոն: Հետո հունիսի 2-ին մասնակցել ենք «Օյամա»-ի գավաթի միջազգային խաղարկությանը, որտեղ նույնպես ունեցել ենք վեց չեմպիոն:

ՀՈՒՅԱՍՏԱՆ

ԶԻՆՂԵԿ ՀԱՐՈՒԹ



Վուրգի, նրա քաջերի ոգով էին դաստիարակվում վակուներից աշակերտները: Դպրոցում շատ էր կարևորվում ռազմագիտությունն առարկան՝ հաշվի առնելով, որ մեր երկիրը մշտապես վտանգի մեջ է:

2016 թվականից այստեղ ռազմագիտությունն առարկան դասավանդելու եկավ ստեփանակերտցի երիտասարդ լեյտենանտ Զարուք Ալեքսանդրի Պետրոսյանը, որը սկսեց իր սաներին առավել մտերմացնել ռազմավարության: Համախառն էր նրանց հետ այցելում գյուղի մուտքի մոտ սրբավայր դարձած հուշարձան, որտեղ 1993թ. մարտի 31-ից մնացել էր Սիսական գնդի «ՌԻՐԱԼ» զինվորական մեքենան, որը վառվել էր թշնամու տանկից արձակած արկից: Այստեղ՝ նահատակ տղաների անուններով խաչքարի մոտ հաճախ էր արիության դաս անցկացնում:

Եղավ Արցախյան 44-օրյա պատերազմը, և Քաջաթաղի շրջանից շատերը կամավոր ու որպես պահեստազորային մեկնեցին առաջնագիծ: Պատերազմի մասնակից եղան նաև ժամկետային զինծառայողները: Սեպտեմբերի 27-ին Բերձորի զինկոմիսարիատի մոտ շատերն էին հավաքվել՝ պատրաստ մեկնելու առաջնագիծ: Պատերազմ գնաց նաև Զարուքը:

Ծնվել է 1990թ. փետրվարի 6-ին Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում: Սովորել է տեղի թիվ 5 միջնակարգ դպրոցում: 7 տարեկանից հաճախել է ըմբշամարտի պարապմունքների: Պատանի մարզիկների համար կարևոր են մրցումները և մրցանակով տուն վերադառնալը: Իսկ Զարուքը գրեթե բոլոր մրցումներում

էր ճանաչվում հաղթող-մրցանակակիր: Ծնողների, 2 քույրերի համար հպարտություն էր Զարուքը, և նրա ամեն մի հաջողությունն մարգարտանում, դպրոցում, հետագայում բանակում և համալսարանում ուսանելիս շատ էր ուրախացնում նրանց: Դպրոցն ավարտելուց հետո՝ 2007թ., ընդունվել է Արցախի պետական համալսարանի Նախնական զինվորական պատրաստության և ֆիզիկական դաստիարակության բաժին (հեռակա): 2008 թվականին զորակոչվել է Հայոց բանակ: Ծառայել է «Արա Լեռ» հրետանային զորամասում: Ծառայության 2 տարիների ընթացքում զորամասի հրամանատարության կողմից ծնողներն ստացել են շնորհակալագրեր: Համալսարանում ուսումնական ավարտելուց հետո աշխատանքի է անցել Մարտունու շրջանի Նճգի գյուղի դպրոցում՝ որպես ՆԶՊ ուսուցիչ: Ամուսնացել է Զարուքի շրջանի Տունի գյուղից Նունե Գրիգորյանի հետ, որն ավարտել է ԱրՊՀ բանասիրական բաժինը: 2016-ի օգոստոսին միասին տեղափոխվել են Քաջաթաղի շրջանի Վակունիս գյուղ, որտեղ կինը սկզբում աշխատում էր հայոց լեզվի և զրակառուցման ուսուցչուհի, իսկ 2019-ին՝ տնօրեն: Այդ ժամանակ Քաջաթաղի շրջվարչակազմի «Մերան» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիրն էր և աշխատանքի բերումով լինում էր նաև Վակունիսում: Դպրոցում հաճախ էին կազմակերպվում տարբեր միջոցառումներ՝ հիմնականում ռազմամարզական: Զարուքն էլ իր տեղը ուներ այդ միջոցառումների ժամանակ կազմակերպիչների, մասնակիցների հետ: Երիտասարդ զինվորներն իր սաների համար ընկեր

էր եւ ուսուցիչ, խորհրդատու զինվորական:

Սակայն եղավ պատերազմ, և ամեն ինչ փոխվեց: Պատերազմի առաջին օրից մինչև նոյեմբերի 9-ը Զարուքը մարտադաշտում էր, եղել է դասակի հրամանատար ու իր զինվորների հետ հերոսաբար մարտնչում էր, մեծ վնաս հասցնում թշնամուն: 2020թ. նոյեմբերի 9-ին կնքվեց հրադադար, սակայն նույն օրը Մարտունու շրջանում հերոսաբար նահատակվեց Զարուքը՝ հավերժ մնալով Վակունիսի դպրոցի զինվոր ու Հայոց բանակի սպա: Կինը՝ Նունեն, պատմում է, որ մշտապես կապի մեջ են եղել: Վերջին անգամ զանգել է նոյեմբերի 8-ի երեկոյան: «Շատ տխուր էր, վերջին բանը, որ ասաց՝ ոչ մի բանից չեմ վախենում, մեռնակ վախենում եմ ձեզ էլ չտեսնեմ... ու կայն ընդհատվեց...», - ասաց Նունեն:

Հուղարկվողները եւ Եռաբլուրում: Հետմահու պարգևատրվել է «Արիություն» մեդալով և «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով: Մարտական ընկեր Իգոր Առուստամյանն է ասել. «Զարուքը զուսմարտակին միացավ՝ որպես պահեստազորի սպա: Ծանոթության հաջորդ օրը մեկնեց մարտադաշտ: Առաջին տպավորությունն՝ տեսանելի էր Զարուքի մարդ տեսակը»: Այդ օրը՝ նոյեմբերի 9-ին, Մարտունու մահատակվեց նաև բերձորցի, Հայոց բանակի փոխգնդապետ Վահագն Բաբայանը: Վահագնի ընթացքը՝ Վանիկը, դարձյալ պատերազմի վերջին օրը զոհվեց, բայց՝ Բերձոր քաղաքում, երբ թշնամին ռմբակոծում էր Քաջաթաղի շրջկենտրոնը: 2020թ. 44-օրյա պատերազմում զոհվեց նաև Զարուքի սաներից 18-ամյա

ժիրայր Գագիկի Մարգարյանը, որը 6 քույրերի միակ եղբայրն էր ու ավագը: Միասին հաճախ էին այցելում Վուրգի և իր զինվորների նահատակության վայր, ուղեցնելով նրանց հերոսությանը: Զարուքի կինն ու որդին՝ Ալեքսանդրը, որը կրում է 2018-ին մահացած պապի անունը, սկզբում Վակունիսում էին, հետո տեղափոխվեցին Երևան և այժմ էլ բնակվում են այստեղ: Զարուքի մասին՝ որպես զինվոր ու լավ հայ, գովեստով, սիրով ու ցավով են խոսում Քաջաթաղի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը և ՆԶՊ գծով տեսուչ Արին-Վոլոդյա Գալստյանը:

Քաջաթաղի շրջանից 44-օրյա պատերազմում նահատակվել են նաև Ուռեկանի, Փակահանի դպրոցների զինվորներ Գևորգ Գրայրի Սիմոնյանը (1990թ.), Սուրեն Աշոտի Գովհաննիսյանը (ծնվ. 1974թ.), Վուրգավանի դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ, ծյուղոխստ Աշոտ Արայի Կոստանյանը (1990թ.): Մինչ օրս անհետ կորած են համարվում Զակարի և Զակ գյուղերի դպրոցների տնօրեններ Արսեն Անդրանիկի Զարայանյանը (1991թ.) և Յուրիկ Սոսիկի Պողոսյանը (1972թ.): Ընդհանրապես Քաջաթաղի շրջանից Արցախյան 44-օրյա պատերազմում զոհվեցին 70-ից ավելի քաջորդիներ, կան անհետ կորածներ: Առավել ցավալի է նաև, որ կրկին թշնամու տիրապետության տակ անցան Հայոց տարածքները՝ Վակունիսն ու Վուրգավանը, Ուռեկանն ու «Արա Լեռ»-ը, Զակարին ու Զակը...

Ջոհրաբ ԸՈՒՔՈՅԱՆ

ԱՐՑԱԽԸ ՄԵՆՔ ԵՆՔ, ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է՝ ՎԵՐԱԴԱՐՉ

Ինչպես նաև մասնակցել ենք ուշու-քունգ-ֆուի՝ Մոնթե Մելքոնյանի հիշատակին նվիրված մրցմանը եւ բավականին լավ արդյունք ենք ունեցել: Բացի դրանից, մասնակցել ենք մարտավարական ֆեյտիվալի՝ ցուցադրական ելույթներով, նաև նման ելույթով հանդես ենք եկել սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության օրվա կապակցությամբ: Այս մեկ տարվա ընթացքում մենք կարողացել ենք տարբեր միջոցներով, իհարկե, ոչ երեխաների հաշվին, ծեռք բերել ուսումնական բազա, որը բավարարում է երկու խմբի մարզումներն անցկացնելու համար: Բայց այդ նույն բազան նույնպես կատարելագործման խնդիր ունի:

Խնդիրներից էր նաև այն, որ շատ մեծ դժվարությամբ ենք կարողացել գրանցել մեր հասարակական կազմակերպությունը: Բազմաթիվ խնդիրներ են առաջացել՝ կապված տարբեր բառերի, նախադասությունների հետ: Բոլոր իրավաբանական հարցերը լուծել ենք: Նաև խոչընդոտներ կային՝ կապված մեր հայտարարությունների տարածման հետ. մայրաքաղաքում ոչնչացվել են մեր բոլոր պլակատները: Դիտավորությամբ հրկիզվել են, որպեսզի մյուս արցախցիները չլինեն մեր մարզական գործունեության մասին: Այժմ խնդիր ունենք՝ կապված Հայաստանում կազմակերպվող տարբեր մրցաշարերում պահանջվող բանկ անդամավճարների հետ: Դա մեծ ֆինանսական խնդիր է առաջացնում երեխաների համար: Կարող է շատ լավ պատրաստվածություն ունեցող երեխաները հնարավորություն չունենան մասնակցել: Մեր մասնակցած վերջին միջոցառումների ժամանակ ես կարողացել եմ տարբեր միջոցներով գտնել պահանջվող գումարները եւ ապահովել մեր

մարզիկների մասնակցությունը մրցաշարերին: Հիմա պատրաստվում ենք դեկտեմբերի 1-ին կայանալիք Հայաստանի առաջնությանը, նույնպես կանգնած ենք այդ անդամավճարները մուծելու խնդրի առաջ, որը բավականին թանկ է: Մենք սովոր չենք այդպիսի գումարներ վճարել մրցումների մասնակցելու համար:

Մեծ է մեր մարզիկների ոգևորությունը, ինչու չէ՝ նաև նրանց ծնողների: Շատերը գալիս են վայելելու արցախյան մթնոլորտը, որը կարողանում ենք պահել: Ինձ համար վիրավորական էր, որ Արցախի հանրային հեռուստատեսությունը կարծես թե չցանկացավ լուսաբանել մեր գործունեությունը, մինչդեռ Հայաստանում գործող գրեթե բոլոր լրատվականներն ու տարբեր հեռուստատեսությունները անդրադարձել են մեզ, ինչի շնորհիվ մեծ տեսանյութեր ունենք: Այժմ ունենք 72 մարզիկ:

- **Կճանրամասնե՞ք՝ ի՞նչ նպատակ ունեք Ձեր կողմից նոյեմբերի վերջին կազմակերպված միջոցառումը: Ինչպե՞ս այն անցավ:**

- Միջոցառումը, որը հաշվետու մրցում էր, կազմակերպել էինք մեր ակումբի վերակազմավորման մեկամյակի կապակցությամբ: Այն բաղկացած էր երկու մասից, առաջին մասը արդյունքների ամփոփում էր, որտեղ նշվեց, թե ինչի ենք կարողացել հասնել այս մեկ տարում: Նաև լավագույն 15 մարզիկներ, որոնք տարբեր մրցումներում մրցանակային տեղեր են գրավել, եղել են չեմպիոններ, պարգևատրվել են գավաթներով եւ պատվոգրերով: Հետո անցկացրել ենք հաշվետու մրցումը, որին մասնակցել են բոլոր 72 մարզիկները՝ երեխաներ ու պատանիներ: Բնականաբար բոլորը պարգևատրվել են շնորհակալագրերով, դիպ

լումներով, պատվոգրերով եւ հուշանշաններով: Հուշանշանները պատրաստված էին հատուկ մեր ակումբի համար, մեր լոգոյով, իսկ թիկունքային մասում գրված՝ «Մենք մեկ տարեկան ենք»: Միջոցառման համար կարգախոս էր ընտրված՝ «Ազատ Արցախը ողջունում է Ձեզ»: Այդ գրվածքով պատաստվել էր զինվորները եւ անդամները: Երեխաները բավականին լավ արդյունք են ցույց տվել: Մրցումը կազմակերպվել է անվճար, մասնակից մարզիկները անդամավճար չեն մուծել:

- **Ձեր թիմի մարզիչներից միայն Դո՞ւք եք ներկայում գրավում մարզական աշխատանքով: Ինչպե՞ս է Ձեզ եւ Ձեր մարզիկներին հաջողվում մշտապես բարձր մարտական ոգի պահպանել:**

- Մեր թիմի մարզիչներից, այո, միայն ես եմ աշխատում որպես մարզիչ: Մյուս մարզիկները, կապված սոցիալական հարցերի հետ, ընդգրկված են այլ աշխատանքներում: Կարատեն նաև վերականգնողական բնույթ էր կրում: Մեր կարատեի բազայի հիման վրա կազմակերպվել էր պրոֆեսիոնալ հոգեբանների հետ համոզիպում: Երկու ամիս շարունակ նրանք աշխատել են մեր երեխաների հետ: Բացի դրանից, կարատեն մարտավետ է մարտական սպորտ է: Մարզումների ընթացքում բարձր մարտական ոգին կանուր է, որպեսզի մարզվողները ունենան հաղթանակի կամք ու ձգտում: Կարատեիստի համար պարտությունը աստիճան է, մի փորձություն, որը շրջանցվելու է: Այսինքն՝ հաղթանակի ճանապարհին լինում է պարտություն: Բայց դա հետ չի պահելու մեզ ոչ մի բանից: Մարզիկների թիվն էլ է ազդում ոգու վրա: Երբ երեխան գալիս է մարզադահ

լիճ, տեսնում, որ շուրջը արցախցիներ կան, ինքն իրեն մեռնակ չի զգում: Իսկ երբ մարդ իրեն մեռնակ չի զգում, նա իրեն ուժեղ է զգում: Դրա համար ես մարզիկներին միշտ ասում եմ, որ մեք մեռնակ չենք, մենք իրար հետ ենք: Մեր կարգախոսն է՝ «Արցախը մենք ենք, մեր նպատակն է՝ վերադարձ»:

- **Դ՞նարավոր է առաջիկայում ուրիշ տեղեր էլ մարզեք աշակերտների:**

- Մենք ունենք երեխաներ, որոնք պարապմունքի են գալիս տարբեր տեղերից՝ Հրազդանից, Սեւանից: Ես ուզում էի, որ Հրազդանում էլ ունենայինք խմբեր, բայց մարզադահլիճ չգտնվեց: Դիմեցի քաղաքապետարան, բայց չստացվեց:

- **Ի՞նչ խորհուրդ կտաք արցախցի այն մարզիկներին կամ առհասարակ մեր այն հայրենակիցներին, որոնք բռնատեղահանվելուց հետո ընկնվել են, կորցրել հայրենիք վերադառնալու հույսը:**

- Բոլոր մարզիկներին եւ առհասարակ արցախցիներին խորհուրդ եմ տալիս, որ երբեք չընկճվեն: Երբեք չկորցնեք հայրենիք վերադառնալու հույսը: Անելանելի վիճակներ չկան: Երբ որ Նոյեմբեր 1955թ. դեկտեմբերին մահանում էր Վլադիմիրի բանտում, նա նույնիսկ չէր կարող պատկերացնել, որ 21-րդ դարում իր արձանը կանգնելու է Երեւանի կենտրոնում: Չպետք է հույսը կտրել, այլ պետք է աշխատել այդ ուղղությամբ: Աշխատել լինել միասնական, չվիճել իրար հետ, պահպանել մեր բարբառը, մարզվել ու չլռել, չնստել տեղերում: Հույսը չդնել պաշտոնյաների վրա, այլ ինքնակազմակերպվել, համախմբվել գաղափարի շուրջ, իսկ առաջնորդներ կծնվեն:

Սույա ԱՎԱԳՅԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ՝  
ԱՐՅԱՆԻ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՈՒ ԲՈՆԱԳԱՂԹԻ ԹԵՄԱՅԻՆ

Դեռևս անցյալ տարեվերջին հայտարարվել էր Լեռնային Ղարաբաղի շրջափակման ու բռնատեղահանման թեմայով գեղարվեստական արձակի մրցանակաբաշխության մասին, որի արդյունքներն ամփոփվեցին 2024 թվականի հոկտեմբերի վերջին:

Մինչ այդ ՀՀ-ն սպառնալից էր ավանախ, որտեղ գետեղվել էին արցախցի գրողների մտորումներն իրենց ապրած բլրկադային օրերի մասին: Այս նոր նախաձեռնության հեղինակները՝ Հայաստանի գրողների միությունն ու Գրողների արցախյան միավորումը, որոշել էին արցախյան գողգոթայի թեման դարձնել գեղարվեստական արձակի նյութ, ինչի լավագույն դրսևորումը կլինի ու եղավ գրական մրցանակաբաշխության կազմակերպումը:

Մրցանակաբաշխության էին ներկայացված 15 հեղինակի գործեր՝ ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից: Հինգ հոգուց կազմված մրցանակաբաշխական ժյուրիի որոշմամբ Ալիսա Հովհաննիսյանը՝ «Տրիպտիխ», Մարգարիտ Դերենցը՝ «Ավետյաց երկիր» և Գրիգոր Ջանիկյանը՝ «Հերոսի հարությունը» ստեղծագործությունների համար արժանացան, համապատասխանաբար, առաջին, երկրորդ և երրորդ մրցանակների:

Ես հինգ գրողներ արժանացան խրախուսական մրցանակների: ՀՀ կլոր դահլիճում տեղի ունեցած՝ մրցանակների համընթաց արարողության ժամանակ Հայաստանի գրողների միության նախագահ, բանաստեղծ Եղվարդ Միլիտոնյանը կարևորեց նախաձեռնության նշանակությունը, միաժամանակ նշելով, որ տվյալ շրջանա-



մանակ Հայաստանի գրողների միության նախագահ, բանաստեղծ Եղվարդ Միլիտոնյանը կարևորեց նախաձեռնության նշանակությունը, միաժամանակ նշելով, որ տվյալ շրջանա-

կուն էլի կան ծրագրեր, որոնց գլխավոր նպատակը արցախյան ողբերգության թեման տաք պահելն է, բոլոր ձևերով ու միջոցներով Արցախը վերստին հայաբնակ դարձնելը:

«Լուսարար»-ը շնորհավորում է Արցախի շրջափակման ու արցախահայության բռնի տեղահանման թեմայով պատմվածքի մրցանակաբաշխությունում մրցանակի ու խրախուսանքի արժանացած հեղինակներին՝ ակնկալելով, որ արցախյան թեման միշտ տաք կմնա գրողների ստեղծագործական զարկերակում:

Ստորև մեր ընթերցողներին ենք ներկայացնում առաջին մրցանակակիր ԱԼԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «Տրիպտիխ» պատմվածքը:

Ալիսա Հովհաննիսյան

ՏՐԻՊՏԻՒՍ

Նվիրվում է Հայրենիքից բռնի տեղահանված արցախահայերին



Ճանապարհվի, գոնե ոտքերի տակ մի կոշտ բան լինի: Մոտոն խնդրեց, որ տուփի պատերը ապակուց լինեն, որ թռչի ժամանակ կարողանա շուրջը տեսնել, բայց մեր գյուղի ապակի գոող Մանվելը այդքան ապակի չուներ: Ասաց. «Կլոր պատուհաններ կարքեմ, ապակուց լուսամուտներ կամրացնեմ՝ չոր փայտե պատերին»:

Մոտոն ուրախ էր շատ: Մենք էլ էինք ուրախ, քանի որ տխրելու ժամանակ չուներեց: Միայն հասցրինք կատակել. «Որ Տեր Աստծուն տեսնես, հարցրու՝ ե՞րբ է մեր ժողովրդի հանգիստ ու ապահով ապրելու ժամանակը»: «Կհարցնեմ», - ուրախ ու միանգամայն լուրջ պատասխանեց Մոտոն՝ վստահ, որ լավ լուրերով է վերադառնալու, այլ կերպ չի կարող լինել:

Տատրակուհիներից ամենատարեցը անձամբ ինձ խոստացավ. «Մի պահ անգամ չկասկածես՝ հենց Մոտոյից մի լուր եղավ, տեղ կհասցնեմ»:

«Բջջայինս թողնե՛մ եղինջի թփերի մեջ», - հարցրի նրան: Մի պահ երկու կլոր, փայլատ աչքերով դիտեց ինձ ու ծիծաղեց:

Դեռ շատ չէր անցել այն օրերից, երբ մենք Հայաստանի խոլ գյուղերից մեկում (մեր գյուղից մի քիչ լավ է) մեզ հատկացված քարուքանդ, լքված տունը կարգի էինք բերել, մոտիկ անտառից ցախ էինք կրել, կուտակել, արդեն վերմակ, բարձ ու ներքնակներ ունեինք, որոնք փռեցինք հատակին: Դրանցով ծածկեցինք փայտե հատակի մեծ ճեղքերը:

Մեր այս նոր տան քիվին էլ տատրակներ կային: Նրանք մերոնց նման անհոգ երգեր էին երգում: Երևի մեզ էին խղճում, թե՛ ո՞նց ենք անցկացնելու առաջիկա ծնունդ այս անձանոթ վայրում:

Բայց մի օր՝ երեկոյան, երբ արդեն լիքը ջուր էինք կրել մեր տուն-խրճի, երբ արդեն մեր տան մեծ

մայրիկը եփել էր գյուղապետարանից ստացած լոբին ու ճաշի համով գոլորշիները մեզ լավ ընթրիք էին խոստանում, ես դուրս եկա բակ ու լսեցի մեր տատրակների անսովոր ուրախ ճվլտոցը: «Երևի ծագուկներ են ունեցել, - ասացի ինքս ինձ, - ափսոս չեն դիմանա ծնունդը: Բայց ոչինչ, հիմա ուրախացե՛ք: Պետք է սովորենք գնահատել ամեն օրվա մեջ եղած ուրախության փշուրն ու հատիկը»:

Հանկարծ նրանցից մեկն իջավ, նստեց ուսիս: Գնալեցի մեր գյուղի տան ամենակրտսեր տատրակիկին, որին իր տատն էր ուղարկել:

«Քեզ շա՛տ, շա՛տ ուրախ լուրեր ունեմ հաղորդելու», - ճովորեց: Լսում էի նրա սրտիկի անհամբեր թվարկը:

«Մոտոն ողջ և առողջ վերադարձավ Աստծո՛ւ երկնքից»:

«Ո՞նց Աստծո՛ւ երկնքից»: Շփոթահար էի:

«Հա՛, հենց Աստծո՛ւ մոտից»:

Գրկեցի տատրակիկին: Նա հաճույքով տեղավորվեց թևերիս մեջ ու շարունակեց. «Ոչ միայն ինքն էր Մանվելի սարքած ապակեպատ լուսամուտներով տնակում»:

«Է՛լ ո՞վ», - չհամբերեցի:

«Է՛լ ո՞վ»: Հիմա ասեմ: Նրա հետ տնակից դուրս եկավ մի սիրուն աղջիկ՝ Շուշանը, մի պապիկ՝ սպիտակ, երկար մորուքով, նրանց ետևից էլի աղջիկներ ու տղաներ՝ շա՛տ սիրուն, փայլուն շորերով, հետո՝ ծիծեր, խոզուկներ, գառնուկներ ու շա՛տ, շատ գրքեր»:

«Ո՞նց գրքեր»:

«Հա՛, հա՛ շատ գրքեր: Մոտոն դրանք վաղուց դասավորել է մեր դպրոցի գրադարանի դարակներում: Շուշանը մաքրել է, պլպլացրել է դպրոցը: Մոտոն ու Շուշանը իրենց հետ եկած երեխաներին գրել-կարդալ են սովորեցրել: Իրենք էլ արդեն երկու ծագուկ ունեն՝ տղա ու աղջիկ»:

«Ո՞նց, ո՞նց», - չի հասցնում շնչառությունս կարգավորելու: Մոտոն գրել-կարդալ չգիտի»:

«Գիտի: Հիմա Մոտոն էն քո իմացած թափանցիկ գունատը չի...»

կպատմեմ ամեն ինչ», - գրեթե հանգած խոսեց տատրակիկը:

«Ո՞րն է ամենակարևոր ասելիքը», - առավոտյան տատրակիկից շուտ արթնացած, դեռ աչքերս կարգին չբացած, հարցրի իմ գրվածքի մասին: «Միայն այն ամենը, որ ինքն ինքն էր երկար ճանապարհից հետո հոգնել էր երևի շատ»:

Նա չսպասեց միջև իրեն կերակրեմ ու ջուր տամ: Ինքն էլ սկսեց:

«Ամենակարևորը իմ տատ տատրակուհու ասելով սա է. «Տեստ՛ում եք, ուրեմն որքան է նյութապաշտությունը փչացնում ամեն ինչ, դրա պատճառով որքան են դժվարանում մարդկանց ու նաև մեր՝ թռչուններիս հարաբերությունները, ու որքան են հեշտանում ու արագանում իրար հասկանալու, միմյանց սիրելու, օգնելու, վայելելու գործընթացները»:

«Տատը հենց այդպե՛ս՝ «գործընթացներ» ասաց:

«Ասաց, որ հիմա մի քիչ վախենում է, որ Մոտոյի ու մեր գյուղի այս սքանչելի, զարմանալի գործընթացներից հանկարծ մենք՝ թռչուններս, ետ կմանք: Թեև կռիվներն ու պատերազմները մեր միջավայրում մեր նախնիների խոհեմությամբ նվազագույնի է հասցված»:

«Խոհեմությամբ»: Հենց այդպես էլ ասա՛ց տատը»:

«Տատս ասաց, որ աշխարհի բոլոր չարիքները՝ սկսած պատերազմներից, վերջացրած ընտանեկան ու ընկերական կռիվներից, վեճերից, բոլոր թշնամանքները գալիս են, կարող են ասել ինչից»:

Չեղքս տարա ճակատիս, ուղղեցի ակնոցս, որ խելացի մարդու տեսք ընդունեմ: Ասացի մի բան, երկու բան, երեք բան՝ «նախանձից», «ազահությունից», «վախկոտությունից»:

Տատրակիկը խորամանկորեն ժպտում էր ու ամեն թվարկածիս հետ բացասաբար շարժում էր գլուխը:

«Ընդամենը մի բառով ասա»:

«Տգիտությունից»:

Նա էլի բացասաբար շարժեց փոքրիկ գլուխն ու վերջապես ասաց:

ՄԵՐ ԳՅՈՒՂԸ, ՄԵՐ ԱՊԵՐԻԿ ՄՈՍՈՆ, ՏԱՏՐԱԿՆԵՐԸ

Մեր տան բակում տատրակներ կան: Բուն են դրել տանիքի քիվում: Նրանց հետ խոսել գիտեմք մեր տան բոլոր անդամներով: Իսկ մեր տան խեղճը՝ Մոտոն, նրանց լեզուն ավելի լավ է հասկանում, քան մերը՝ մարդկայինը:

Երբ ամբողջ գյուղով բռնեցինք բռնի տարահանման ճամփան, որ կարծես թե մոռացել էինք, իբր՝ թողել էինք 20-րդ դարում, թաղել մեր հիշողության խորքերում, որի վրա իբր՝ առատ խոտ էր աճել, տեղ-տեղ կանաչ մամուռ, անհետացավ մեր Մոտոն: Տատրակներն էլ լուր չուներին մեր ապերիկից: Բայց կարծես ինչ-որ բան գիտեին ու թաքցնում էին: Նրանց ճովորումն ուրախ էր, կարծես չէին հասկանում, թե ուր ենք ծամփվում: Մեզ նման մտածում էին, թե մի քանի օրից կվերադառնանք, ու Մոտոն էլ արդեն գտնված կլինի:

Երբ արդեն ամբողջ գյուղով կազմ ու պատրաստ էինք, չէինք մոռացել մի քանի տաք շոր, ծածկոց, մի քիչ ուտելիք, չորացրած միրգ ու ավելուկ բառնալ մեր գյուղի տասը ավտոմեքենաների վրա, Մոտոն հայտնաբերվեց: Նա միշտ էլ թափանցիկ լինելու չափ գունատ է եղել, բայց հիմա միայն թափանցիկ էր: Գյուղը որոշեց նրա համար մի փոքրիկ տուփ պատրաստել, որ եթե հանկարծ երկինք

ԵՐԵՎԵԼԻ ԵՎ...

ՏՐԻՊՏԻՆ

«Հիմնարկությունից: Տասն շատ երկար է մտածել ու հիմա բոլորից էլ լավ գիտի: Չե՞ս հավատում նրան»:

Հավատում եմ, այո, հենց էլ է, որ կա: Հիմնարկությունից... Հերթով, երբեմն էլ խառնիխուռն սկսեցի մտաբերել մեր բոլոր դժբախտությունները:

Ճիշտ է ասում տատրակիկի իմաստուն տատը...

Հաստատ՝ Երազմ Ռոտերդամցու և Բոսխի ժամանակ էլ՝ մոտավորապես 17-րդ դարի սկզբներին, եղել է մի իմաստուն ծեր տատրակուհի, որ նրանց համար բացել է այս գաղտնիքը... Ու դրանից հետո՝ երկար ժամանակ բոլոր խելոքներն ու հիմարները ծիծաղել են հիմարության վրա:

20-րդ դարում, ցավոք, հոգեբանները հայտարարեցին, որ հիմարությունը չբուժվող հիվանդություն է...

Տեսնե՞ք, 21-րդ դարը ի՞նչ որոշում կկայացնի հիմարության մասին... Ի՞նչ դատավճիռ է սպասում խելոքներին...

Ու քանի որ տատրակիկը անսխալ կարող էր մտքերս, խորհեցի, «Իսկ ի՞նչ են անելու իմ եղբայր Մոսոն ու երկնից եկած նրա ուղեկիցները, եթե մեր հիմար թշնամիները մտնեն գյուղ»:

«Մի անհանգստանա, ճշմոտեց իմ բարեկամ տատրակիկը, Նրանք մեր գյուղի տեղը չեն կարող որոշել ոչ մի հետախուզական հնարքով: Նրանց մոտքն այնտեղ արգելված է»...

ՅԱԿՈՎ

- Դոկտոր, աչքիս չես ուզում ես տնից դուս գալ: Դուրըղ էլե՞լ ամ:

Դոկտոր Ահմեդը նոր էր քրեյ բակի ծաղիկները:

- Արի՛, արի՛, Միկուշկա, նստի, կոֆե դնե՛: Մի- մի բաժակ էլ արաղ խմե՛ք ես Յակովի անտակ կարասներից:

Սուրճը խմեցին, օղին էլ խմեցին մի քանի կտոր երշիկով: Հացը Միկուշինն էր բերել հետը:

- Լավ տեղ ենք չե՞, քեզ տեղավորել, դոկտոր քան...

Դոկտոր Ահմեդը առաջին իսկ օրից գլուխը կորցրել էր այս հսկա տանը... Մեճակ լինելը՝ չգիտեր այս դեպքում լավ է իր հոգնած մերկերի համար, թե՛ ընդհակառակը... «Տանըդ պես զգա», - ասել էր Միկուշինը, երբ առաջին անգամ իրեն բերեց այստեղ: Չարմազավ դոկտոր Ահմեդը, որ ոչ ոք ձեռք չի տվել տասնյակներով տեսակ-տեսակ պահածոյացված կոնյակների, հյութերի, բանջարեղենի բանկաներին: Հետո էր հասկանալու, որ արդեն աղբեջանի կամ ռուս ամեն մի հրամանատար կամ այլ պաշտոնյա այս տնից ավելի լավ մի տեղ էր արել իր համար Մեծ Թաղեր կոչվող հայկական գյուղում:

Օր էր լինում, որ դոկտոր Ահմեդի ետևից ոչ ոք չէր գալիս, օրեր էլ կային, որ մի քանի հիվանդ էր լինում գորամասում:

Այսօր դեռ ոչ մեկը չէր կանչել: Ամբողջ օրը մեճակ էր ամեն բարիքով լի այս հսկայական տանը:

Դոկտորը այս վերջին տարիներին, ինչ անցել էր զինվորական բժշկի իր պարտականություններին, շատ լավ ու վատ բան էր տեսել ու իմացել: Բաներ, որ իր երեսնամյա կյանքում չէր էլ պատկերացրել: Ուրֆա քաղաքի բուրձների վրա գտնվող տներից մեկում էր ծնվել, մեծացել, շատ աղքատ ընտանիքում: Ըստ Ահմեդի հաշվարկների՝ ամեն կողմից փլվող այս տունը 19-րդ դարի վերջերին էր կառուցվել, քանի որ տան ճակատին պահպանված էր երեք թիվ՝ 189... Վերջին թիվը անգագուշաբար ջնջվել էր այս տանտիրոջ ազգանվան հետ:

Դարոցում այնքան լավ էր սովորում, որ ուսուցիչները միշտ գովում էին, բայց խելոքները հայրը կարգին ուրախանալն ինչ է, երբեք չէր իմացել: Կյանքում զվարթ օր տեսած չկար: Մայրը՝ Այշե հանըմը, շրջապա-

տի քիչ թե շատ նորոգված տներում այլևս լվացք չէր անում, քանի որ ունեցողներն արդեն լվացքի մեքենա ունեին, իսկ չունեցողները հազիվ սև օժանդի մի փոքրիկ կտոր էին ճարում և այն էլ՝ ոչ միշտ:

Մի անգամ ֆրանսերենի ուսուցիչը՝ մըսյո Եֆրեմ Ջևեդ օղլուն, իրեն բռնացրել էր Հայր Աբրահամի լճի շրջակայքում հենց այն պահին, երբ ինքը ամեն անգամվա պես լճի մեջ վտառներով խայտացող ձկների տեսքով մի քիչ հիանալուց ու մի երկու տուրիստի համար երգելուց հետո, արդեն մոր կարած հնամաշ, ուսից կախ ընկած պայուսակ տուպրակի մեջ տեղավորել էր տուրիստ կնոջ տված չորեկը և բլուզի գրպանն էր ստուգում՝ ծակ չի՞, որ տեղավորեր իր երգի համար վաստակած լիրաները:

Ուսուցիչը մի շրիկան ապտակ հասցրեց Ահմեդին: «Մեկ էլ չտեսնեմ հայի դիմաց կանգնել՝ երգել: Դու էլ հո չուլախ չե՞ս Մամուրի մամն»: «Բայց, - ուզում էր ասել Ահմեդը, - Չուլախ Մամուրը չի երգում, նա մուրում է», - բայց վախեցավ մի հատ էլ շառաչում ապտակ ուտելուց:

Իրենց թաղում տուն չկար, որտեղ գոնե մի արատավոր երեխա չծնվեր: Ասում էին՝ անհիծված լինելուց է. հայերի տներում հենց էնպես, առանց դժբախտության ապրել չէր տրված իրենց: Բայց ի՞նչ անեն, հարմարվում էին՝ կամրջի տակ, եթա ընտանիքներով ամառ-ձմեռ ապրելուց լավ էր: Իրենց տանը՝ փառք Ալլահին, բոլոր երեխեքն էլ ձեռով-նոտով էին, միայն Մեֆարեթն էր՝ ամենափոքր, ամենագեղեցիկ քույրը, որ չխոսեց ու չխոսեց:

Մըսյո Եֆրեմ Ջևեդ օղլուն էր սակայն, որ գնահատեց, թե Ահմեդը ինչ լավ է ֆրանսերենից, նաև՝ մաթեմատիկայից ու մյուս առարկաներից: Նա էր, որ տնօրենին համոզեց էս բացառիկ երեխային Ստամբուլ ուղարկել՝ գիշերօթիկ զինվորական դպրոցում կարգին կրթություն ստանալու: Դժվար էր Այշե հանըմին համոզելը: «Նա իմ աջ ձեռն է՝ ես մեր անձրակների ընտանիքում»: Բայց մըսյո Եֆրեմ Ջևեդ օղլուն կարողացավ արտակարգ ընդուն, ասելով, որ շատ չի մնացել՝ մի տասը տարուց էս տղան էնքան կառաջադիմի, որ լինոն կքամի բոլոր հարևանների վրա, ու Այշե հանըմի աջ ձեռքն էլ արդեն ավելի կգործանա:

Գիշերօթիկում, այնուհետև՝ Մոսկվայում էլ սովորելու տարիներին Ահմեդը փայլուն էր իր ընդունակություններով, բայց խելոքությունը երբեք չէր ուզում դուրս գալ իր միջից՝ լավ տեղ էր արել:

Շրջում էր դոկտոր Ահմեդը առատությունից ճեքճեք այս երկհարկանի տան սենյակներով, լաթով մաքրում էր այսուայն կողմի փոշին ու աչքի առաջ էին Այշե հանըմն ու իր խելոքուկրակ հայրը, որ ամբողջ կյանքում ուրախանալ չսովորեց, նույնիսկ Ահմեդի՝ Մոսկվայից ուղարկված փողը ստանալու օրերին: Ու հաճախ խեթ էր նայում տեղիմանտեղի Այշեի ծիծաղկոտ դարձած կերպարանքին:

Դոկտորը այս տան տանձենու տակ դրված թախտին գրեթե նյութեղեն պատկերացնում էր հորը՝ թըզբեի ձգելիս ու ջղարա քաշելիս: Մայրը, ինչե՛ր կաներ այս տանը, ի՞նչ բյուրեղներ կթխեր... Այլուրով պարկերը շարված են սրանց հացատան պատի երկայնքով:

Տարօրինակ մտքեր եկան Ահմեդի գլուխը... Ի՞նչ կլիներ՝ այս տան տերերն էլ իրենց հետ միասին լինեին այստեղ: Բոլորի համար էլ լիուլի տեղ և ուտելիք կա...

Նորից բարձրացավ երկրորդ հարկի հյուրասենյակը, որտեղ պատից պատ գրքեր էին շարված՝ հաստափոր՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն... Նորից բացեց ընտանեկան լուսանկարների ալբոմը... Արդեն գլխի էր ընկել, որ անհիմների վրա տեղաշարժվող այս անոտ, ազնվական դեմքով մարդը, տան տղամարդն է... Բառի բուն իմաստով կեսմարդ Յակովը էս ի՞նչ գարմանահարաշ ոգի է ունեցել: Քիչ էր մնացել իր

մտորումներով կիսվեր Միկուշինի՝ ես ավարտված ավազի հետ, որին մի երկու բաժակ արաղ տուր, հոգին կհանի կոնի սեղանին... ուրիշ բան պետք չի: Հարցներ՝ ի՞նչ գիտի Յակովի մասին... Բայց նա էլ իր նման գյուղը դատարկվելուց հետո էր եկել:

Գրադարանի փեղկերից մեկի վրա արդեն քանիտորոք անգամ նայեց կարմիր տառերով գրությունը... Շատ էր ուզում իմանալ, թե ի՞նչը պետք է այդքան կարևորություն ունենար Յակովի համար, որ նա սիրուն գարդանախշերով մեծ-մեծ, երկի հենց իր հյուսնարի (բազմաշնորհ) ձեռքով գրել ու դրել է ամենաերևացող տեղում: Նկարել էր, ուղապատկեց Անկարա՝ իր վաղեմի հայ ընկերոջը՝ Արտոյին, որ թարգմանի: Հիմա արդեն գիտի՝ այդ գեղեցիկ տառերով բացատրվում է մարդ արարածի կյանքի ճշմարտություններից մեկը. «Ով վախեցած է, նա կիսով չափ պարտված է» (Ջավահարլար Ներու): Առաջին դարաբաղյան պատերազմից երկու տասնորոշ գրկված լինելը, հիմա էս հսկա տնից ու իր ձեռքերով (առանց ոտների) գցած այգուց գրկված եսիմ ուր հեռացած լինելուց հետո, էս Յակովին ուրեմն ինչո՞վ կարող են վախեցնել, որ վախենա: Տեսնե՞ս որտե՞ղ են հիմա՝ ընտանիքը, աղջիկները, որդին...

Դոկտոր Ահմեդի ձեռքը արդեն քանիտորոք անգամ ինքն իրեն երկարում է դեպի ընտանեկան ալբոմը... Առաջին էջին Յակովի տատիկն է՝ ջահել, գեղեցիկ, ձեռքին մի ոլորած թուղթ: Երկի դիպումն է՝ տակը ռուսերենով գրված է՝ «Шуши, гимназист»: Մյուս էջում մի մեծ խումբ օրիորդների նկարն է, մեջտեղում՝ մի արժանապատիվ տղամարդ՝ ակնոցով, փոքրիկ բեղ-մորուքով, գեղեցիկ... Ուսուցիչն է կամ՝ դպրոցի տնօրենը... Չէ՛, դժվար է այս մանրանկարում գտնել Յակովի տատիկին: Մի ուրիշ անգամ կգտնի՝ կրոնավոր լուծելու փոխարեն: Բայց հաշվել հո կարո՞ղ է: Վաթսուներեք աշակերտուհի, բոլորն էլ նույն հագուստով, ձերմակ, ժամյակե օձիքներով... Ահմեդը այսպիսի մի դասարան է ուզում պատկերացնել 19-րդ կամ 20-րդ դարի Թուրքիայում, որտեղ թուրք աղջիկները, հրաշքով չաղբաների տակից դուրս եկած, այսպիսի մի լուսանկար թողած լինեին իրենց սերունդներին: Չի ստացվում:

Ահա և Յակովի տատիկի հարսանեկան նկարը... Յա՛... էս ի՞նչ սիրուն են էս հայ կնիկները... քա սրա ամուսնացում, որի հետ հենց էր գիշեր անկողին է մտնելու Յակովի տատիկը: Էլի բեղ-մորուքով, էլի ազնվական... Երկուսն էլ ժպտում են:

Նայում է Ահմեդը նորահարս նախատառի ձեռքերին, որ սիրո՛ւն, սպիտակ հանգչում են ձերմակ քրիզանթեմների փնջի վրա: Նա նստած է, իսկ նախապապ-նորափեսան կանգնած է նրա թիկունքում... Հաջորդ էջերում նրանց երեխաներն են, որ էջից էջ մեծանում, բազմանում են: Նկարներից մեկում Ահմեդը ութ տարբեր տարիքի աղջիկներ հաշվեց՝ շարված արդեն պատկառելի տարիք ունեցող մայրիկի ու հայրիկի շուրջը: Ամենափոքրը՝ իններորդը, երեսնամեծ տղա է. մի ոտքը ծալել է ու ծուռ հենվել մոր կրծքին, մոտ երեք տարեկան է: Գուցե սա էլ հենց Յակովի հայրն է, հը՞... Հետո էլ կասե՞ն՝ թուրքերն են շատ էրեխա բերում:

Հաջորդ էջերում Ահմեդը անհամբեր փնտրում ու գտնում է Յակովին՝ գրկի երեխա, դպրոցական, համալսարանական, որ անպայման գյուղատնտեսական պետք է եղած լինի, այլապես Յակովը էսպիսի տնտեսություն, խաղողի այգի էսքան ճիշտ հաշվարկներով... Եթե նույնիսկ պապից է ժառանգել, ինքն է, չէ՞ խմանել... Յակովին ի՞նչ կա... Սա մարդու հզոր տեսակ է...

Արդեն դպրոցական տասը խմբանկարներում հեշտությամբ գտել է Յակովին... Նրա ժպտից է ճանաչում: Ամեն տեղ ժպտում է... Ահմեդը ընդամենը մի խմբանկար ունի Ուրֆայի դպրոցից, որտեղ ինքը լուրջ է ու ասես մի կերպ գապում է լացը, շրթունքը պինդ սեղմել է, որ ոչ մեկին չպատմի իրենց

խրճիթում թագավորող անասելի վատ կյանքի, ամենժամյա ցավերի ու անհասկացողությունների մասին: Իսկ իր հայրն ու Այշե հանըմը գոնե մի լուսանկար չունեցան միասին:

Ահմեդը բաց վիճակում է թողնում այն էջը, որտեղ Յակովի դասարանի վերջին խմբանկարն է: Արաբական 10 թվից հասկանալի է՝ ավարտում են դպրոցը:

Կոկորդը չորացել է... Ի՞նչ երանության մեջ են ապրել էս Յակովի ընտանիքի անդամները: Երբ կոկորդները չորացել է, բացել են երեքլիտրանոց այս չտեսնված համով մոշի կամ բալի կոմպոտի բանկաներից որն ուզել են, խմել են սրտների տվածի չափ...

Խոհանոցի վրացարանի ամանեղենի չորանոցում մաքուր լվացած ափսեներ են... Դրանց ձեռք չի տվել Ահմեդը: Միայն մի ափսե, մի զգալ, երկու պատառաքաղ, երկուսական սուրճի, արաղի, թեյի բաժակ՝ իր ու Միկուշինի համար... Այս համատարած մաքրության մեջ տարօրինակ էր, ու դրանից ճնշվեց Ահմեդի սիրտը, տասը հատ սուրճի չլվացած բաժակ կար... Ուրեմն հարևաններով կամ ազգականներով, մի խոսքով՝ հյուրերով հավաքված են եղել՝ մոտեցող արհավիրքի լուրը առած, սուրճ են խմել, չեն հասցրել լվալ բաժակները... Ստածել են՝ հիմա փախչե՞նք, մեզ կրակի ու մորթոցի տակ չզցնե՞ք, հետո կզանք, կլվանանք...

Ահմեդը խմեց իր բացած բանկայից մի մեծ բաժակ մոշի կոմպոտ: Զգաց, որ մի քիչ թթվել է, բայց ափսոսաց բախել, խմեց... Հիմ, մանկությունից խնայող խելոքի սովորություն է... Կարող էր, չէ՞ թափել վարդի թփի տակ, համ էլ պարարտանյութ կլիներ, ու մի նոր բանկա բացել... Հիմա էլ սիրտը արաղ ուզեց... Չի ուզում այս պահին հիշել, որ ինքը մուսուլման է, հատուկ մոռանում է, խնոլ էլ չէ: Բայց էս Յակովի շտեմարաններում շարված գինու ու արաղի շշերը կարծես քեզ մարտի են հրավիրում. Տղա՞ ես, տեսնե՞ք ինչքանից հետո թավալ կտաս հատակին:

Խոհանոցում մեծ, քիթեյա տուփով գեյթուն էր տեսել... Երևում է՝ հեռանալուց առաջ նոր էին բացել տան անդամները: Արաղի բաժակը մի ձեռքին, մյուս ձեռքով երկու լավ բուռ գեյթուն լցրեց ամանի մեջ: Խնում էր ու ուտում համով գեյթունները: Ժպտաց: Հիշել էր, թե ինչ էր ասում Այշե հանըմը, երբ իրենց տանը հանկարծ գեյթուն էր հայտնվում. «Ղաթըխ արեք (խնայողությամբ կերեք), ամեն մի գեյթունը պետք է երեք հացի պատառի հետ ուտեք, երեք անգամ կծեք»: Պատահում էր՝ գեյթուն լինում էր, հաց չէր լինում կամ՝ հակառակը: Պատահում էր՝ ոչ էն էր լինում, ոչ էն: Սոված քնելուց այնքան էլ չէին նեղվում, սովոր էին:

Ահմեդը մեկը մյուսի ետևից հաճույքով ծամեց տռուզ, համեղ գեյթունները, զգաց, թե ոնց է արաղի այրող գոլորշին անցնում իր արյունատար անոթներով: Շատ էլ, թե արգելված է շարիքով: Ներիր, Ալլահ... Սիրտս չի դիմանում էս Յակովի կոչեցյալի պատմությանը... Երեկ ալբոմում տեսել էր Յակովին՝ զինվորական հրամանատարի հագուստ-կապուստով, գեյթը ձեռքին, ժպտալիս, խմբով, իր գնդի զինվորներով շրջապատված, բոյով-բուսաթով, էլի ժպտալիս...

Ներիր, Ալլահ, Յակովի էս ժպտինն է երկի, որ սիրտս հեջ չի դիմանում: Ամենաչդիմանալուն Յակովի հարսանիքի նկարն է: Յակովը նստած է աթոռին: Անոտ է՝ առանց երկու ոտների: Կրծքին մեղալներ կան: Կողքին կանգնած է սպիտակ շորով մի ջքնաղ աղջիկ: Երևում է՝ էս Մեծ Թաղար գյուղի ամենասիրուն աղջիկն է ընտրել պատերազմի հերոսին: Էստեղ նրանք երկուսով են ժպտում: Ալբոմի հաջորդ էջերին ավելանում են նրանց փոքրիկ՝ գրկաչափ աղջիկը, հետո աստիճանաբար մեծանում են, էլի մի փոքրիկ աղջիկ է ավելանում:



... ԱՆԵՐԿՎՈՒՅՑ

ՏՐԻՊՏԻՆ

7 Պ Ահմեդը նրանց անունները է դնում... Ափսոս իրականացնում անունները չի կարող իմանալ: Աղջիկներին ու տղային կնքում է իր հայ ընկեր Արտոյի գավակների անուններով՝ Սաթենիկ, Անուշ, Գրիգոր:

Ահա Սաթենիկը մանկապարտեզում, ահա Գրիգորը՝ ծիպուղ ձեռքին կանգնել է հորթուկի դնչի տակ: Ժպտում են: Ահա դպրոցական խմբակարները: Դժվարությամբ, բայց գտնում է թե՛ Սաթենիկին, թե՛ Անուշին, թե՛ Գրիգորին՝ իրենց տոհմիկ ժպիտով: Արանց ցեղ ժպտալուց չի հոգնում:

Ահա Սաթենիկի հարսանեկան նկարը... Երկաթ, սպիտակ զգեստով, հենց էս՝ իրենց բակում են: Կողքին՝ գետնի վրա անոտ հայրն է՝ Յակովը, որ բռնել է աղջկա քողը, բարձր պահել ու ժպտում է՝ ասես ոչ թե ցածր է մայրում աղջկա բախտավորությանը, այլ՝ վերևից: Ահա և նրանք բոլորով՝ Յակովը, Սաթենիկը, Անուշը, նորափեսան, Յակովի գեղեցկուհի կինը: Գրիգորը չկա: Երևի բանակում է... Իսկ մի քանի շաբաթ անց սկսվելու է պատերազմը... Յակովի կինը մի քիչ նման է ռուս մի աղջկա, որին Տոմսկում կարծես սկսել էր սիրել, բայց իրեն տեղափոխեցին Ադրբեջան: Անունը Օլյա էր: Արի, Յակովի կնոջ անունն էլ դնեց Օլյա:

Ահմեդին խորունկ, տաքուկ քնից արթնացրեց Միկուշինի ծայրը. «Դու կտոր, վեր կաց, մեր Մանսուրովի տիկինն ա ծննդաբերում, պըտի ծնունդ ընդունես»:

Արագ հագնվեց, ամրացրեց գոտին, դրեց գլխարկը, արդեն դուրս էր թռչում դեմից, բայց Միկուշինը կանգնեցրեց. «Դու կտոր, մի, մի բաժակ պըտի գցենք, բեր շիշը: Խմենք, որ դիմանանք: Մանսուրովը ցույց չի տալի, բայց ահուսարսափի մեջ է: Ախպերը, որ հիմա Մեծ Թաղարի կառավարիչն է, երկու ամիս առաջ գույգ տղա ունեցավ, մեկի աջ ձեռքը չկար, մյուսի՝ ձախը: Որովհետև ինքն էլ գիտեր, որ լավ օր չի տեսնելու, երեսա էր մորթել: Բեր, բեր մի հատ էլ լցրու: Ես մեր Մանսուրովը ախպերը կատաղությունից պիտալետտը պահել էր մոր ծննդաբերած կնոջ ճակատին, հագիվ բռնեցին: Դիմա էս մեր կապիտանը վախում է, թե էն մորթված երեսա մոր անեծքը իր վրա էլ կտարածվի»:

Փառք Ալլահին, ծնվածը մի սիրուն, սևուկ աղջիկ էր, քաշը, ամեն ինչը տեղը:

Դու կտոր Ահմեդին տուն հասցնելուց հետո՝ Միկուշինը ուզում էր էլի մի-մի թաս խմել, էս անգամ՝ նորածնի բարեհաջող լույս աշխարհ գալու կնքեցը, բայց դու կտորը կտրուկ մերժեց:

Գարին առա՛տ պարկերով դրած էր, կերակրեց հավերին, հավաքեց 15 հատ ձու, մի մեծ ողկույզ խաղող իջեցրեց կախանից, եփեց իր դայֆեն ու քաշվեց դեպի այն կողմ, ուր ոտքերն էին տանում: Դուրսանեցին, բաց ալբերոնի էջից ժպտում էր Յակովի տա-

տը: Ինչո՞ւ չժպտար: Շրջապատված սիրուն, մաքուր հագնված ազգականներով, զավակներով, թոռներով, ծոռներով: Նկարի վերևում հայերեն տառերի մեջ դափնու ծյուղով զարդարված 80-ն էր հասկանալի: Յակովն այստեղ արդեն առանց ոտների է: Ժպտում է: Դանկարծ ուզեց Յակովի աչքերը մոտիկից տեսնել: Մյուս ալբոմում Յակովն էր, որ սիրով ու ժպիտով նայում է իր մոտ տասը տարեկան գեղեցկուհի աղջկան: Ես ո՞նց եմ հագցրել, ո՞նց եմ կերցրել, ո՞նց եմ ուրախացրել երեսունը...

Ինչ-որ մի տեղ հիշողություն-ֆլեշ էր տեսել: Փնտրեց, գտավ, տեղադրեց իր համակարգի մեջ: Յակովը հասցրել էր համակարգիչը փրկել փախեփախից: Ֆայլերի վերնագրերը, լավ է՝ ռուսերեն էին: Էլի աղջկա հարսանիքն է. այս անգամ՝ տեսագրված, ժպիտ ու տրամադրությունները շարժուն ու լսելի:

Ահա, Յակովը նստած է մի բարձր տաբուրետի՝ կացինը բարձրացնում, իջեցնում ու կոճղը մանր վառելափայտի է վերածում: Բակում՝ ծածկի տակ իրար վրա սիրուն դարսված փայտերն, ուրեմն Յակովի ջարդածն են: Գրիգորը՝ մոտ տասը տարեկան, կոճղը դնում է մյուս՝ հսկա կոճղին, հոր ձեռքի տակ, հայրը կացնի կտրուկ ու վարժ հարվածներով մանրացնում է փայտը: Տղան արագ-արագ հասցնում է մեծ կոճղին դնել հաջորդ փոքր կոճղը: Մի պահ խցիկը մոտիկից է նկարում Յակովին: Նրա աչքերն ու ժպիտը մոտիկից է տեսնում Ահմեդը: Այն, ինչ ուզում էր: Այդ աչքերը ազնիվ էին ու բարի՝ իր հոր աչքերի նման: Սա ո՞նց է կրակել, թուրք սպանել, էսքան բարի, էսքան ազնիվ, էսքան տնտեսվար... Ալլահի, երկար կյանք տուր սրա նմաններին, թե՛ կուզե՛ս առանց ոտների: Բայց սրա նմանը կա՞ աշխարհում:

Մյուս ֆայլը վերնագրված է «Библиотечка»: Յակովը մազլցում է պարանե աստիճանասանդուղքով: Ահմեդը հայացքը թեքում է դեպի ամբողջ պատը բռնած գրադարանը ու աչքերով գտնում պարանե աստիճանը: Եկրանին Յակովը ամենավերին դարակից վերցնում է մի հաստափոր գիրք ու մի ձեռքի օգնությամբ իջնում իր սայլակին, մոտենում հենց այս գրատեղանին, բացում է գիրքը, սկսում կարդալ:

Ահմեդը դեռ խելքի չի եկել: Անկախ իրենից մոտենում է պարանե աստիճանին, փորձում է բարձրանալ դրանով, բայց չի ստացվում, երևի ոտներն են խանգարում:

Հեռախոսը զնգաց: Միկուշինն է. «Մանսուրովի կնիկը վատ ա, պատրաստվի՛, գալիս են»:

Սա այն պահն էր, երբ Ահմեդը Յակովի տատիկի ալբոմում նայում էր երանավետ ծեր կնոջը՝ շուրջը հավաքված ժպտացող, սիրուն-սիրուն հագնված, տարբեր տարիքի երեխաներով, հարսներով ու փեսաներով: Բոլորն էլ իրե-

նից էին սերուն, իր երեխաներն էին: Վերևում դափնեպսակի մեջ 111 թիվն էր: Ուրեմն Յակովը նույնպես երկարակյաց է լինելու: Փառք Ալլահին...

ՇԵՎԵՑ

Արդեն հարյուր տեղից դրել - պայթեցրել էին էդ գյուղական շենքը: «Հե՛րոդ էր շինել էդ ամեն ինչով տեղը տեղին պալատը, թե՛ պապը. այ՛ բեմուրազ», - ինքն իրեն խոսում էր ծխից ու փոշուց սևացած, արցունքակալած աչքերով Շևեցը. - Դիմա էլ ասելու եք՝ «Շևե՛ք, բուլղոգերո՞ք բեր, քի՛, տար՛ էս աղբը, լցրու՛ ծորը»: «Բա դա ա՞րք էր: Աչքերս տեսած չլինե՛ին, ուրիշ կըլնե՛ր: Վա՛խ, վա՛խ, էդ ի՛նչ շենք էր»: Ով ինչ ուզել, տարել էր արդեն մինչև պայթեցնելը: Թույլ էին տալիս: Շևե՛քը ոչ մի բանի ձեռք չի տվել, գիտի, որ հարամ է: Ըհը՛, Ալլահը վկա»:

- Շևե՛ք, ո՞ւր է Շևե՛քը, այ՛ Ալլահի դու, էլի ո՞ւր կորար: Արի, արի: Բուլղոգերո՞ք քոքի: Բենզինը Յակուշինը կլցնի: Պատրաստ էղի, էս գիշեր էս տանը կքնես, քու հոր՝ իման Մուստաֆայի նման տերտերի տուն ա:

- Որտեղի՞ց գիտես: - Մենք ամեն ինչ գիտենք: Տերտերը մի տարի առաջ՝ բլրկադայի կախտ ա մեռել: Երեսեքն էլ, ոչ մեկին հայտնի չի, թե աշխարհի որ ծերուն են: Սառնարանը դատարկ, դատարկ էր: Ասում են՝ սովից ա մեռել: Բայց Յակուշինն ասել ենք, հիմա լիքն ա: Ինչքան կուզես, կե՛ր, կարաս մի քիչ էլ խմես: Մարդ չի իմանա: Տերտերը արաղ ա ունեցել պահած: Կարող ա՛ հենց սոված փորով կոնծելուց էլ մեռել ա:

Երբ արդեն Շևե՛քը քիթ ու մուրթը ծռած, փորն էր բռնել, որ ասի. «Հիվանդ եմ, այ՛ մարդ, ստամոքսիս ցավից մեռնում եմ, թողե՛ք տուն գնամ: Առավոտը շուտ Մուսան իրա ավտոյով կերի, կհասցնի»:

- Չէ՛, քեզ լավ գիտենք, դու որ գնացիր, էլ էկողը չես: Դիմա գնում ես ուղիղ տերտերի տունը, ուտում ես, քնում ես, լողանալը պարտադիր չի, թեև կարաս լողանաս, տաք ջուրը տվել ենք:

Շևե՛քը տերտերի տուն մտավ մինչև մութն ընկնելը: Տնտղեց, գտավ էլեկտրականության բոլոր կոճակները, վառեց բոլոր սենյակների լույսերը, բայց վախը չէր անցնում: Նամազի ժամին խոնարհվեց, աղոթքը արեց, դիմեց Ալլահին, հարցրեց՝ թո՛ւյլ է տալիս Ալլահը, որ ինքը գիշերի էս տանը, ուտի, խմի, առավոտը բուլղոգերով գյուղական շենքից մնացած աղբը մաքրելուց հետո, բուլղոգերով ավերի էս տերտերի տունը: Մուստաֆակի խնդնդացող աչքերից հակացել էր, որ շենքից հետո տերտերի տունն են սրբելու աշխարհի երեսից:

Ալլահը, ինչպես միշտ այս անգամ էլ չպատասխանեց իր հար-

ցին: Թողեց, որ ինքը հասկանա, որոշի:

Նստեց տերտերի կաղնեփայտե մեծ՝ մի տասը հոգու համար նախատեսված սեղանի մոտ: Փորձեց առոք-փառոք վայելել սառնարանից դուրս բերած կապչոնի կալքասը (ապխտած երշիկը), որ շատ է սիրում, տակից արդեն խմել էր տերտերի օղին: Դիշեց, որ տերտերը գուցե սոված փորին օղին օղու ետևից խմելուց է մեռել: Կերավ, կերավ, էլի մի բաժակ օղի կուլ տվեց, գնաց տերտերի մեծ, սիրուն ծածկոցով մահճակալի կողմը, որ քնի, գուցե հանգստանա: Ես մահճակալին մի չորս հոգի կտեղավորվե՛ր: Իր վեց երեսեքը էստեղ իրար հետ կտեղավորվե՛ին:

Բայց նրա աչքին երևա՞ց, թե՞ արդեն երազ էր տեսնում: Մահճակալին պառկած էր տերտերը՝ փիլոնով, բանով, զլխին սև թասակ ու իրեն է նայում: Գուցե իրեն բա՛ն ունի ասելու: Նստեց նրա ոտների կողմը, հարցրեց.

- Կուզե՞ս մի քիչ հաց-մաց բերեմ, գուցե մի-մի թաս միասին խմենք: Իմ հերն էլ քո նման իման էր, հայ քիրվաներ ուներ: Բոլորն էլ մարդ էին, մարդ, ինսան:

Երբ կալքաս-հացն ու օղին առած վերադարձավ, մահճակալն արդեն դատարկ էր: Ինքը կերավ անհավես, դատարկեց, քամեց օղու բաժակը, առանց հանվելու ուզեց պառկել թախտին: Թախտին որտեղից որտեղ հայտնված պառավը սուսուփուս վեր կացավ, գնաց: Քնեց Շևե՛քը: Վա՛յ էն քնելուն: Թախտը էնպես սկսեց ցնցվել, որ Շևե՛քի պուճուր մարմինը վեր-վեր էր թռնում: Փռվեց հատակին: Տանիքից դողողոց, հետո ծիծաղ, հետո վե՛ճ, հետո լաց, հետո էլի ծիծաղ, էլի վե՛ճ, էլի լաց... Առաստաղից թռփոթփ, թոմփոցներ տեղացին, բայց լույսը վառելուց հետո բոլոր ծայները կտրվեցին:

Լույսը անջատեց, (թե ինչո՞ւ անջատեց)... Սրանք էս անգամ թռչկոտում էին, վերևում՝ տանիքում կարծես հագարավոր չղջիկներ իրար էին հրմշտում, կարո՞ղ է, իրար խառնված, սեքսով են զբաղվում... Սկսեցին դոփել, կարծես մեկին կամ մի քանիսին էին կոխկռռում...

Շևե՛քը որոշեց՝ լավ կլինի՝ բակ դուրս գա, կարող է օյադանա մաքուր օղից: Բայց էստեղից էին, ուրեմն գալիս էր ծայները: Ստեփանակերտը կարծես միացրել էր բոլոր բարձրախոսները... Աղմուկի, ցնծության, ողբուկոծի մեջ էին: Մարդ չէր երևում, բայց ծայները կային: «Ուրվականներ են, էղ է որ կա», - հասկացավ Շևե՛քը, բայց զարմանում էր, որ չի վախենում: Նրանցից մեկը մոտեցավ, ձեռքը դրեց իր ուսին ու խոսեց, թեև չէր երևում:

- Մի վախենա, Շևե՛ք: - Չեմ էլ վախենում, - պատասխանեց Շևե՛քը, կարծես հարագան հորեղբոր հետ էր զրույցի բռնվել: - Մի՛ մտածիր, թե վատ բան ես

անում հայի կառուցածը քանդելուց: Ինչ որ քանդվելու է, առանց քեզ էլ կքանդվի: Ինչ որ լինելու է, դու չանես, ուրիշը կանի: Առավոտը կգաս, կմաքրես քո տարածքը, մի քանի օրից կգաս, տերտերի տունը կքանդես քո բուլղոգերով:

Շևե՛քը նայում էր իր շուրջը փռված մութին, երկնքում փայլող խոշոր աստղերին ու ոչինչ չէր հասկանում:

Դիմա ի՞նչ է պահանջվում իրենից՝ ընդվզո՞ւմ, թե՞ վիզո՞ւմ խոնարհում նաչալնիկների առաջ:

Մտավ տուն, մի բաժակ էլ կոնծեց տերտերի պահած օղուց, ախորժակով կերավ պանիր-հացը ու էլի դուրս եկավ բակ, հույսով, որ հոպարը էլի կգա ու էլի բան կասի իրեն: Ինքը պատրաստ է նույնիսկ նրանից մի լավ սիլլա ուտելու:

Հոպարը արդեն էնտեղ էր: Կամացուկ երգ էր ասում քթի տակ, հայերեն... Մի փոքրիկ խարոյկ էր վառել՝ երկի Շևե՛քի համար:

- Տղես, դու լավ սիրտ ունես, - ասաց ծայրը: -Արի՛, արի՛ տաքացի իմ օջախի կրակից: Դու չկարծես, թե էս քաղաքը անպաշտպան է: Մենք՝ հայ ուրվականներով, էնքան պինդ ենք ու շատ ենք, որ մեր դեմ ոչ մի բանակ չի դիմանա: Իսկ թե մե՛նք հարձակվեցինք... Ու՛րուու... - էստեղ մորից մի էնպիսի աղմուկ բարձրացավ, որ Շևե՛քին թվաց, թե հիմա իրեն արդեն շեյթանները ջիենդեն են քարշ տալիս: Սրբաբուրդ էր: Այնքան մոտեցավ կրակին, քիչ մնաց մեջն ընկնել, որ ցրտից չսառչի...

- Էստե՞ղ եք ապրում, - համոզվելու համար, որ աներևույթ հոպարը մոտակայքում է՝ իբր միա-միա-միա-միա հարցրեց Շևե՛քը: Ինքն էլ իր հարցից բան չհասկացավ:

- Մենք չենք ապրում, քաղաքն ենք պահում:

- Բա չե՞ք վախենում մեզնից:

Հոպարը կարող էր քոքջալ այս հարցումից, բայց անուշ ծայնով պատասխանեց.

- Դու քեզ մյուսների հետ մի՛ հաշվիր: Բոլորիդ մեկ-մեկ ծանաչում ենք: Քեզ նմաններն էլ կան, գիտենք: Աստծո մատյանում ամեն ինչ գրվում է: Վաղը բուլղոգերո՞ք առ, արի՛, մաքրիր՛ տարածությունը, հետո տերտերի տունը կքանդես: Ասեմ, որ էդ տունն արդեն քանդված էր էն օրից, որ նրա տղերքը միայնակ թողին հորն ու մորը, գնացին: Էնպես որ հանգիստ գնա՛, քնիր...

Շևե՛քը նայեց շուրջը, սպասում էր, որ մորից կլսվի ուրվականների խառնիխուռն աղմուկը, բայց շուրջը լռություն էր:

- Ես քաղաքին քո բուլղոգերը ոչինչ չի անի: Մենք պահպանում ենք ամեն ինչ, որ պահելու է արժանի: Իսկ արժանիներն ավելի շատ են, քան անարժանները: Էն, ինչ որ քանդում եք, տեղը կգա, ավելի լավն ենք սարքելու: Գնա՛, գնա՛ Շևե՛ք, մի բաժակ էլ կոնծիր ու քնիր:

20.2.24 թ. Ծաղկածոր

ՀԱՄԱՐԱՐ Հիմնադիր՝ ԽՍԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ Է-մեյլ: gorcert@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է «Լիմուշ» ՄՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500 Ստորագրված է տպագրության՝ 29.11.2024թ.: